

5196

891.99

UK-19

28

28

2011

Ա. ԱՌԵԼԵԱՆ

891.99

48

Q-19

Ս Կ Ե Ս ՈՒՐ Ը

(Գիտական ընթերցից)

($\frac{1006}{29176}$)

(Արտատպած «ՄՈՒՐԸ» ամսագրից)


12003

ԹԻՖԼԻՍ

Յպարան Մ. Դ. Ռոտինյանցի

Типогр. Т. М. Ротинянца, на Гол. пр., д. № 41.

1899



Дозволено Цензурою. Тифлисъ, 17 Февраля 1899 г.

29987-Ա. Կ.

12779-58

9

Ս Կ Ե Ս Ո Ւ Ր Ը

(Գիւղական բարքերից)

Լ

N. գիւղացի Ոսկանենց Քամամը մի փարի է, որ այրիացել է, մնալով իր փանը մենմենակ: Քամամի միակ մխիթարութիւնը այժմ նրա մինուճար որդի Գէորգն է, որն ահա փաօը փարի է օտարութեան մէջ է գտնուում: Խեղճ Ոսկանենց Կարապետը որդու աշխատանքի պտուղներից արդէն վաչելել էր: Նա իր կեանքի վերջին փարիներում, որ շարունակ փկար էր, մի փափագ միայն ունէր. արժանանալ իր Գէորգի փեսութեանը, պսակել նրան և յետոյ մեռնել. բայց երկարատեւ և մաշող հիւանդութիւնը չյարգեց Կարապետի կամքը և խեղճը մեռաւ՝ չհասնելով իր մուրազին:

Ամուսնու մահից յետոյ Քամամը կէս փարեաց ընթացքում զանազան ակնարկներով ու մութ ձեւերով հազիւ կարողացաւ յայտնել որդուն, թէ նրա հայրը վախճանւել է:

—Խեղճ է երեխաս, ասում էր նա ամեն անգամ իր գիր գրող փրացու Մեսրոբին, — որդիս յանկարծ կը լսի, կը վախենայ ու իր մէջ ցաւ կը գոյացնի:

Վերջին նամակում, որտեղ թամամը ուղղակի յայտնում էր որդուն հօր մահը, մի առ մի նկարագրել էր տեղ նրա ցաւը, մահւան օրը, հոգին աւանդելու րոպէն, թաղումը, ժամ պարարագը և վերջացրել էր նամակը հեպւեալ տողերով. «հօրդ գերեզմանի վրա, որդիս, քար չեմ քաշել տեւ. լաւ քար չգտնեց, մօտս էլ փող չկար: Ենպէս մնացել է. պահել եմ, որ դու դաս, նորից պարարագ անել տաս և ժամից յետոյ քո ձեռքով առօք-փառօք մի լաւ քար քաշել տաս հօրդ գերեզմանի վրա և որդիական պարտաւորութիւնդ կատարես»:

Կարդալով մօր նամակը, Գէորգը դառնապէս լաց եղաւ, ցաւեց, որ հայրը չարժանացաւ նրա առեւորական ծրագիրներին իրազորմանը, որը Կարապետին մեծ ուրախութիւն կը պարծառէր: Գէորգը խղճաց և մօրը, որ մնացել էր մենմենակ, և վճռեց նրա սիրոյն համար անպարճառ զիւղ վերադառնալ: Նա իր համագիւղացի մի երիտասարդի հետ ընկերով խառնութ ունէր X. քաղաքում: Իր հաշիւները ընկերոջ հետ պարզելուց և խանութը նրա խնամքին յանձնելուց յետոյ, Գէորգը ճանապարհեց դէպի զիւղ, խոստանալով ընկերոջը հինգ-վեց ամսից յետոյ վերադառնալ:

Աշունը նոր էր մտել: Եղանակները դեռ պարզ էին և մեղմ: Գէորգը ճանապարհին ցրտի կամ անձրեւի տակ չընկաւ, թէև սաստիկ նեղութիւն կրեց Զանգեզուրի լեռնոտ ճանապարհներում և բաւականին յոգնած ու ջարդւած զիւղ հասաւ:

Թամամը որդուն տեսնելուն պէս նրա վզովը փաթաթեց, չիշեց ամուսնուն, որ Վէորդ ջանս կանչելով հոգին աւանդեց, և լաց եղաւ: Արտասուքը խեղդեց և որդու ձայնը. նա ոչինչ չկարողացաւ արտասանել և դառն կերպով հեկեկաց: Ազգական և հարեան կանայք ու տղամարդիկ այցելութեան եկան: Սրանք սկզբում լաց էին լինում և ապա մխիթարում Գէորգին: Յաճախ արտասուող մօրն էլ նախատում էին՝ ասելով.

— Թամամ բաշի, դէ հերիք է ախր. պա որդուդ չես խնայում. ախր քեզ տեսնում է, ինքն էլ լաց է լինում: Փառք Աստծոյ, տղադ սաղ-սալամաթ եկել է տեղ հասել:

Ազգերները կամաց-կամաց հանդարտւում էին: Քիչ յետոյ սկսեց սովորական զրոյցը: Ամենքը իրանց օտարականների մասին տեղեկութիւններ էին հարցնում: Գէորգը ամեն մէկին գոհացուցիչ պատասխաններ էր տալիս և յայտնում թէ ումնից է նամակ բերել: Եկողը քիչ նստում էր, իր հետաքրքրութեանը լիութիւն տալիս և ապա, շնորհակալութիւն յայտնելով, հեռանում: Թամամի աղջիկը, որ Գէորգից տարիքով մեծ էր և վաղուց էր մարդու դնացել, եռացող հեշտաբուռն էր կացել: Նա թէ էր պատրաստւում և բաժանում հիւրերին: Հեշտաբուռն շարունակ պարտասփ՝ կանգնած էր պատուհանում, որովհետև ամեն մի այցելուի այդ օրը պիտի հիւրասիրէին թէյով:

Բաւականին ուշ էր, որ վերջին հիւրերը հեռացան և այնուհետ միայն յոգնած, ջարդւած ճանապարհորդը կարողացաւ անկողին մտնել ու հանգըստանալ:

Այցեւութիւնները հետևեալ առաւօտեան ևս շարունակուած էին: Ամենից առաջ ուղղակի ժամից եկաւ տէր-Սարգիսը և հոգոց ասաց: Գէորգը նրա մաշտոցի վրա մի մանէթ դրեց: Տէր-Սարգսի ղէմքը փայլեց ուրախութիւնից: Նա մի ըրեմկա արաղ խմեց, շնորհակալութիւն յայտնեց և գոհ սրտով հեռացաւ այդ տեղից:

—Այ տէրտէր, սպասիր՝ չաչ բերենք՝ խմիր,— ասաց Թամամը:

—Օրհնես դու, այ Թամամ,— պատասխանեց տէրտէրը ծիծաղելու.— չաչը ինչ եմ անում. դա ջահիլների բան է. իմը արաղն էր, որ խմեցի. Աստուած պահի մեր օտարական տղերանց. էլի հէնց դրանք են տէրտէրի զադըրը (արժէքը) իմանում...:

Այդ օրը այցեւութիւնների շրջանը վերջացաւ և այնուհետ Թամամը նւիրեց իր անձնական հոգսերին: Այդ հոգսերից ամենակարևորը որդուն ամուսնացնելու հարցն էր:

—Հազիր տղաս եկել է, մտածում էր նա,— պիտի շուտ անեմ պսակեմ. մինչ քրք առանց կնիկ ֆնայ. երեսուն տարեկան է. պա քրք պիտի որդի ունենայ, որ տղան զայ հօրը ջանին հասնի: Պիտի սրակեմ, ով գիտէ ինչ կը պատահի...

Թամամը մի քանի անգամ ակնարկներ արեց զրա մասին իր որդուն, որպէս զի իմանայ նրա տրամադրութիւնը: Որդին իրան միշտ չհասկանալու էր գնում և խոյս էր տալիս այդ հարցից, թէ երեկոները երբեմն գնում էր իր հօրեղբօր կնոջ մօտ և նրա առաջ բաց անում իր սրտինը. մօրից ամաչում էր:

—Սողոմէ ազի, ասում էր Գէորգը.— պսակում էք ինձ՝ պսակեցէք, շուտ արէք, թէ չէ կը գնամ օտարութիւն, էլ ինձ ձեր ճանկը չէք գցիլ. ճշմարիտն եմ ասում, էլ ոչ կը գամ և ոչ էստեղ հարսանիք կ'անեմ: Դու ինձ ասա՝ ով սիրուն և խելօք աղջիկ ունի:

Սողոմէն նրան մի քանի աղջկերանց անուններ էր տւել և Գէորգը կարողացել էր բոլորին էլ ջրատեղից վերադառնալուց տեսնել: Հինգ աղջկայ մէջ Գէորգի աչքը միայն Թաթոսենց Հայրապետի աղջիկ Սաթենիկին էր կպել. և նա արդէն շտապում էր հարսանիքն ու նշանադրութիւնը միաժամանակ կատարել: Գէորգը Սողոմէին մի քանի անգամ խնդրել էր, որ սա միջնորդէ և մօր հետ զրա մասին խօսայ: Մինչև որ Սողոմէն կը կատարէր Գէորգի խնդիրը, Թամամը մի օր համբերութիւնը հատած դարձաւ որդուն և ասաց.

—Այ որդի, ախր պահէնց պիտի պարզ ասեմ, որ հասկանաս. դէ դու, փառք Աստուծոյ, երեսուն տարեկան տղամարդ ես, կնիկ տանելու ժամանակը անցել է. էլ պիտի սպասես: Ես մենակ եմ, ինձ

ձեռք է հարկաւոր, էս փունը պահող է հարկաւոր. ես առաջւայ ոցժն էլ չունիմ. պառաւել եմ: Մի հարս բեր էս փունը, ես էլ ուրախ լինեմ, փափազա առնեմ, դու էլ: Խօմ չես սպասելու, որ ես էլ մեռնեմ, չեմոյ հարսանիք անես:

—Ձէ, ազի, խեղճ չես մեռնես. հարսանիքս էլ կը փեսնես, հլա թոռն էլ ես փեսնելու:

—Պա երբ, մջ որդի, պա ինչի ես փազ արել, խսկի բան չես խօսում: Դէ հարսանիք անելու լաւ ժամանակ է. ամեն ինչ փաններս պատրաստ. ասն, որ ես իմ բանը իմանամ, գնամ հիմիկանից մէկ աղջկայ նշան անեմ, որ ձեռքիցս դուրս չգայ:

—Ազի, ես մի աղջիկ հաւանել պրծել եմ. գնան մատանին փուր, ասաց Գէորգը՝ ամաչելով և ծիծաղեց:

Նրա դէմքը շառագունեց: Թամամը զարմանքով և հետաքրքրութեամբ աչքերը որդու աչքերին յառեց:

—Ո՛ւմ աղջկանն ես հաւանել, որդի. հարցրեց նա արագաշունչ:

—Թաթոսենց Հայրապետի աղջկանը. գեղեցիկ, առողջ աղջիկ է, ինքն էլ շնորհքով:

Թամամը պահ մի մնաց քարացած: Նա իր բութը բերանին դրաւ և վիրաւորանք, նախադիւնք ու զարմանք արտայայտող եղանակով բացականչեց.

—Ա՛յ փղայ, էդ էր պակամ: Պա էդ երբ հաւանեցիր: Իսկի ինձ հետ մի օր չես նստել, խորհուրդ չես արել, թէ այ մէր, ես ուզում եմ պատկ-

ւեմ, ի՞նչ խորհուրդ ես փալիս, ի՞նչ աղջիկ կայ, որի աղջիկն է լաւ, դու որին ես հաւանում... Ախր ես քո մէրն եմ. աղջիկը որ քո կինն է լինելու, իմ էլ հարսն է դառնալու: Պա ես Թաթոսենց աղջկանը հարս կը բերեմ ինձ համար. խեղճ որդեղ է:

—Ի՞նչու, ազի, ես փեսել հաւանել եմ. Սողոմէ ազին էլ է գովում:

Գէորգը հասկացաւ, որ հօրեղբօր կնոջ անունը չպիտի տար մօր մօր, բացց արդէն ուշ էր:

—Սողոմէ ազին, գոչեց Թամամը. —Նրա լեզուն օձ կծի... Նրա բաները կը լինեն, հաւատա, որ քեզ գլխից հանել է... Էս է էլի, էս է իմ բախտը. որդին իմը, ինձ ոչինչ չի ասում, գնում է հօրեղբօր կնոջ հետ խորհուրդ անում, նրա հետ աղջիկ ջոկում: Շողը իմ գլխին էլ, իմ բախտի վրան էլ...

Թամամի շրթունքները դողդողացին, աչքերը լցեցին արտասուքով և նա այլ ևս չկարողացաւ շարունակել իր բողոքը:

—Ա՛յ ազի, ի՞նչու. ախր լաց ես լինում. Սողոմէ ազին մեզ խօմ ուրիշ չի. էլի թող ամեն բան քո քէ՛ջովը լինի: Իզուր ինչի ես լաց լինում:

—Ձէ, միւսնոյն չի, պատասխանեց Թամամը՝ արտասուքը սրբելով. —Ես քո մէրն եմ. առաջ ինձ պիտի ասես, ես պիտի աղջիկ ջոկեմ. դէ որ ուրիշի հետ խորհուրդ ես արել պրծել, էլ ինձ ինչի ես խօսցնում:

—Ա՛յ ազի, չեմ իմանում դու ինչ բնաւորութիւն ունես. էլի է ես էդ իմանայի, պա քեզ չէի

ասիլ. ամաչում էի, ինչ թագցնեմ... Ելի դու քո խօսքը ասա, քո կամքը յայտնիր:

— Թաթոսենց Հայրապետի աղջկանը մոքիցդ հանիր, ասաց Թամամը կտրակի. — նա լաւ աղջիկ էի. համարձակ է, մեծի պատիւ չի հասկանում, ամեն մարդու հետ համարձակ-համարձակ խօսում է. սոսնա զլխաբաց է լինում, կտուր է դուրս գալիս զլխաբաց... Ձէ, ամենից լաւը Փիրումենց Ներսէսի աղջիկ Գոհարն է. սիրուն, խոնարհ և հնազանդ աղջիկ է: Նրան բեր ինձ համար հարս, եթէ ուզում ես մօրդ ուրախ պահես:

— Ազի, որ Սաթենիկը զլխաբաց է կտուր դուրս գալիս, էդ ոչինչ չի նշանակում. մեծի պատիւը ճանաչելը դրանից չի կախած. անհաշտ, խռովարար և անզգամ հարսը էդպէս էլ կը մնայ, թէկուզ քըթկալը միշտ բերանին պահես ու երեսը քօղով ծածկես: Մեր կնանիքն էլ կամաց-կամաց պիտի նմանեն քաղաքացի կանանց. ես շատ ուրախ եմ, որ Սաթենիկը գրեկ-կարդալն էլ գիտէ:

— Ձէ, չէ, որդի. էդպէս հարսը ինձ հարկաւոր չի. դու ինձ լսիր. էսօր Գոհարին տես. կը տեսնես ու կը հաւանես:

— Լաւ, պատասխանեց որդին կտրակի, չկամենալով երկարացնել խօսակցութիւնը. — կը տեսնեմ:

Գէորգը մօր խօսքը վայր չգցելու համար թէև Գոհարին էլ տեսաւ, բայց իր վճռին մնաց հաստատ: Սակայն ինչպէս յայտնէր դրա մասին մօրը: Անցած

խօսակցութիւնից նա գիտէր, թէ որպիսի փոթորիկ պիտի բարձրացնէր պառաւը, լսելով նրա մերժումը: Հարկաւոր էր մի միջնորդ, որ համոզէր մօրը՝ որդու առաջարկութիւնն ընդունելու: Դրա համար ամենից յարմարը գիւղի քահանան էր, և Գէորգը իր ցաւը տէրտէրին յայտնեց:

— Ի՞նչու է թարսել Թամամը, ասաց տէր Սարգիսը. ինչո՞ւ սիրտդ կոտրում է. շատ նհախ է անում, որ հակառակում է: Ես նրան կը տեսնեմ և հետը կը խօսեմ: Միայն դո՛ւ ղոչաղ կաց, Գէորգ, հաւանած աղջկանդ ձեռքից բաց մի թող և հարսանիքդ շուտ գլուխ բեր: Մի հատ փաստնոց պիտ առնեմ քեզանից ու յետոյ պսակեմ, աւելացրեց քահանան ախորժելի ծիծաղով. — քո խելքը սրտեղ է...

— Դրանք հեշտ բաներ են, տէրտէր. դու մօրս համոզիր, որ մէջ տեղ սրտնեղութիւն չլինի:

Նրանք բաժանւեցան: Հետեւեալ օրը տէր Սարգիսը եկաւ Թամամի մօտ: Գէորգը անից հեռացել էր դիմամբ:

— Ողջո՞յն քեզ, Թամամ, ասաց տէր-տէրը՝ ներս մտնելով:

— Որհնեմ տէր. համեցէք, նստիր, տէրտէր, ասաց Թամամը՝ ոտքի կանգնելով: Նա այնքան կանգնած մնաց, մինչև որ քահանան նստեց:

Քիչ դէս ու դէնից զրուցելուց յետոյ տէրտէրը ուղղակի հարցին անցաւ:

— Թամամ, լսել եմ տղադ ուզում է Հայրա-

պետի աղջկանը տանի, դու հակառակում ես. ինչու էդպէս բան ես բռնում, տղիդ քէֆին կտրում:

—Ո՞վ քեզ ասաց, տէրտէր. անցած օրին մի խօսակցութիւն ունեցայ տղիս հետ, հիմա ամեն ինչ քո ականջին է հասել: Մի անստ տեսնեմ օվ է քեզ ասել:

—Քո ինչ գործն է. ես միայն եկել եմ քեզ խորհուրդ տալու, որ դու հակառակես: Տղադ էն աղջկանը սիրում է, դու կարող ես նրան զօրել, թէ չէ, էս աղջկանը սիրիր: Զի կարելի. խռովութիւնից, սրտնեղութիւնից բացի ուրիշ բան չի դուրս գալ մէջ տեղ:

—Լաւ ես ասում, տէրտէր, բայց դէ ասի էդպէս չի, հարսը իմն է, իմ տան համար է. տղան կարող է էս աղջկայ, էն աղջկայ վրայ աչք ունենալ, բայց ջոկողը ես պիտի լինեմ. հարսը իմ սրտովն էլ պիտի լինի:

—Սխալ ես խօսում, Քամամ. քո պարպքը կը լինի հարսին խրատել, բան սովորեցնել, բայց աղջկայ ընտրութեան մէջ դու շատ քիչ պիտի խառնես. դու կարող ես միայն ճշմարիտ տեղեկութիւններ տալ տղիդ հաւանած աղջկայ մասին, ուրիշ ոչինչ. փնտցածը նրա քէֆին թող: Մեր եկեղեցական օրէնքը էդ է պահանջում: Մեղք բան է...

—Ի՞նչ մեղք...

—Ախր բանը էն է, որ քեզ համար լաւ հարսը կարող է տղիդ համար վատ լինել. նա կա-

րող է հաւանել, չսիրել, և որ նրան զօրես՝ մեղքի տակ կընկնես:

—Ի՞նչու չպիտի հաւանի. եթէ տղան իմն է, ինձ պիտի հնազանդ լինի, իսկ եթէ չէ, ինքը գիտէ:

—Դու էլի քո ասածն ես ուզում առաջարկել, Քամամ, բարձրացրեց իր ձայնը քահանան. բայց եթէ մի քանի բաներից տեղեկութիւն ունենաս, մի քիչ խոր մտածես, կը տեսնես, որ դու սխալ ես. հարսը բերիր քո ուղածը և յետոյ տեսար, որ տղադ ու իր կնիկը սաղ չեն գալիս. ամեն օր կռիւ, ամեն օր սրտնեղութիւն. քիչ ենք տեսնում մեր չորս կողմը. ինչ կ'անես:

—Ինձ ու իմ ողորմած հոգի մարդուն որ պսակեցին, շատ էին մեր կամքը հարցնում. պա ինչու սիրով էինք:

—Դա պատահմունք է, բախտից է: Ամենքը խօմ ձեզ նման չեն լինիլ: Մէկ էլ պիտի իմանաս, որ տղադ քաղաքում մեծացած մարդ է, էնտեղի սովորութիւնները վերցրած կը լինի. կը զօրես, նա էլ կը նեղանայ քեզ վրայ և կ'ասի—չեմ ուզում պսակել, ես էստեղ հարսանիք չեմ անում. ինչ կ'անես: Զահիլը՝ թունդ կը լինի. լաւ միտք արա:

—Թող զնա, ինչ անեմ. դէ որ էդքան քարասիրտ կը լինի ու մօր սուտ կաթը կը մոռանայ, դէհ էլ ինչ պիտի արած. երեւի Ասուած ամեն ինչ ինքը կը գտնի և միևնոյնն էլ նրա առաջը կը բերի:

—Մէկ էլ պատահում է, թամամ, որ Կողան, եթէ ծնողները հակառակում են, զնում իրան սպանում է. էս էլ մրածիր:

—Գլուխը քարերով կը տայ իմ Կողան, որ էդ պէս բան անի. խի, ես նրա մէրն եմ, նրան թըշնամութիւն խօսմ չեմ անում, որ զնայ իրան սպանի. ես նրա լաւն եմ ուզում:

—Եթէ որդուդ լաւն ես ուզում, նրա սիրած աղջիկը բեր:

Նրանք լուցին: Տէրպէրը էլի մի քանի խորհուրդներ տւաւ ու վերկենալով տեղից՝ դուրս եկաւ: Թամամը տեսաւ, որ դա Կողայի գործն է: Իր առաջ լուրջ հակառակութիւն և դիմադրութիւն կար: Կարողանալով էր արդեօք իր ուզածին հասնել, թէ ամենայն ցաւօք պիտի խոնարհէր որդու կամքի առաջ: Այս միտքը սկսեց անհանգստացնել թամամին: Ի՞նչպէս թողնել Փիրումենց Ներսէսի աղջկանը, որին վաղուց իր հարսնացուն էր համարում: Ի՞նչպէս այնուհետ նա Ներսէսի պառաւ մօր՝ Սանգուլիսի հետ նստի խօսաց: Ել չի կարող նրա երեսը դուրս գալ: Այլ որ Սանգուլիսը քանիցս նրան ասել է.

—Թամամ, թողանս տալու եմ Կողիդ:

Իսկ թամամը պատասխանել է.

—Նախ լաւ, բաժինքը հիմիկանից պարտաւորի:

Եւ այդպէս շարունակել են իրանց զաղպնի խնամութիւնը: Բայց անցած ամէն ինչ թարսւում:

խառնւում է, բարեկամութիւնը աւերում: Պաւստաճ վեր կ'առնի, որ նա իր հասակակից կնկայ թողանը թողած՝ զնայ Հայրապետի աղջկանը տանի. Հայրապետի տունը ով է զնացել, նրա կնկայ հետ ով է բարեկամութիւն արել: Ասենք էդ էնքան էլ մեծ բան չի. ցաւը էն է, որ Սաթենիկը համարձակ աղջիկ է. ինչէր չեն պատմում նրա մասին. տուն մի ղոնաղ գայ՝ ջահիլ կամ ալեոր՝ տեսար գլխաբաց եկաւ բարեւ ասաց և ձեռք տւաւ: Էդ աղջկայ սաղող բան է: Մեր սանամէր Նաշխունը մի օր Հայրապետի տանն է եղել. մի բանի վրայ խօսք է բացել և մեր սանամէրը սկսել է մի աղջկայ մասին վատ խօսել. Սաթենիկը տեղից վեր է կացել և Նաշխունին կպել. աամթ քեզ համար, ասում է, մեծ կնիկ ես, եկել էստեղ բամբասանք ես անում. բոլոր ասածներդ էլ սուտ են. Նւարդը իմ ընկերունին է, նրան լաւ եմ ճանաչում: Մեծ կնիկ ես, անարդար բամբասանքներ ես անում: Պաւսա լաւած բան է. խոնարհ աղջիկը էսպէս բաներ կը խօսան: Ախր ես նրան ինչպէս նշանեմ Կողիս համար:

Այսպիսի մրածմունքների մէջ էր ընկղմւած թամամը մի քանի օր շարունակ, իր համար մեծ դժբախտութիւն համարելով որդու վարմունքը: Նա Կիտուր էր և մրախոհ:

Գէորգը նորից խօսակցութիւն ունեցաւ մօր հետ: Մօր հակառակութեան վրայ այս անգամ նա

փոքր ինչ զայրացաւ և բարկացած՝ մի քանի սպառնալիքներ ասաց:

Քամամբ լաց եղաւ և ձինչ ուզում ես արաստելով, եռացաւ մի կողմ:

Գէորգը կանչեց քրոջը, հօրեղբօրկնոջը, ազգականներից մի քանիսին և նրանց զիմեց որ համոզեն մօրը: Ամենքը սղալի կողմն էին: Երկար խօսակցութիւնից յետոյ կարելի եղաւ վերջապէս առնել Քամամի համաձայնութիւնը: Այնուհետ Քամամը նշան պարաւ Սաթենիկի համար և ինամիները հարսանիքի պատրաստութեան կացան:


II

Հարսնացուն մի սիրուն, համեստ և բարեփիրտ աղջիկ էր: Աշխատասէր էր, բայց ծանր գործող: Եռանդով և հետաքրքրութեամբ էր վերաբերւում դէպ անային գործերը: Նա ձգտում էր միշտ նոր բան սովորել և այդպիսով թէ ետ չմնալ իրանից շնորհքով ընկերուհիներից և թէ գերիշխել իրանից թոյլերի վրայ: Տասն և վեց տարեկան աղջիկ էր Սաթենիկը, և արդէն զիրէր սպիտակեղէն ձևելն ու կարելը: Դերիա ձևելը նոր էր սովորել: Ձեռքի կարը շատ գեղեցիկ էր. տեսնողը կ'ասէր մէքենացով է կարած: Այդպիսի մասներ ունէր Սաթենիկը: Տնտեսութեան մէջ հմուտ էր. մայրն էր այդպէս կրթել: Սաթենիկը համարձակ և ազատ աղջիկ էր համարւում զիւղում: Իւր այդ յատկութիւնների

շնորհիւ նա չէր վայելում կանանց և մանուկանդ պառաւ կանանց համակրանքը: Նա գեղջկուհիների այն պարզ հոգիներիցն էր, որոնք իրանց բնածին և սիրուն հակումների շնորհիւ պատրաստ են ընդգրկելու այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, ճշմարիտ և գաղափարական: Նրանք պատրաստ են իրանց շուրջը փռած խաւար մթնոլորտի երեսն ելնելու. հարկաւոր են միայն բարեշաջող պաշտաններ—և զիւղը իր ծոցից դուրս կը բերէ բարոյապէս աւելի մեծ արժանաւորութիւններով օժտած կանայք քան քաղաքը:

Սաթենիկը իր համարձակութեամբ և ազատութեամբ պարտական էր երկրորդարդ Դրւայեանին, որ նրանց հարեանն էր և սովորում էր հայոց թեմական դպրոցներից մինում: Դրւայեանը ամեն ամառ զիւղ էր գալիս: Տղամարդկանց մէջ նա քիչ էր լինում և մեծ մասամբ տանը վայր ընկած՝ ընթերցանութեամբ էր պարապում: Այդպիսով նա առիթ էր ունենում շփուել կանանց հասարակութեան հետ և յաճախ խիստ քննադատութեան ենթարկել այդտեղ ամբողջ հնացած սովորութիւններն ու կարծիքները: Դրւայեանը շարունակ ծաղրում էր կանանց նախապաշարմունքները, նրանց սխալ ու նեղ հայեացքները կնոջ դիրքի մասին և շարունակ քարոզում էր, թէ կինը տղամարդու հետ հաւասար իրաւունքներ պիտի ունենայ: Պառաւ և միջահասակ կանայք նրան գիծ էին համարում և լուրջ զինւում էին Դրւայեանի դէմ միայն այն

1006
29176
8-57-8
12779-8



դէպքում, երբ վերջինս նոյն միջոցները աւելի եռանդով քարոզում էր ջահէլ հարսներին և աղջկերանց: Սաթենիկի հետ նա յաճախ էր տեսնուում, մանաւանդ ամառանոցում. նրանց օրաները դուռ դուռ էին նայում: Եւ օգտուելով առիթից նա շարունակ աշխատում էր այդ աղջկայ միջոցի աշխարհը լոյսի նոր ծագողայթներ մորցնելու: Սաթենիկին նա գրել կարգալ սովորեցրեց. նրա համար ընթերցանութեան գրքեր էր բերում: Կարդացածի մասին հարցնում էր և իր կողմից էլ բացատրութիւններ պալիս: Սաթենիկի մայրը սկզբներում դէմ էր այդ բանին և գլխաւորապէս նրա համար, որ «կը խօսալին»: Սակայն սրտան ուշադրութիւն չէր դարձնում: Եւ կինը շարունակ տեղի պալով սրտայի ալիքներին՝ ինքն էլ ընտելացաւ նրա քարոզներին և գործին:

Ուսումը և Գրեալեանի յաճախ յարձակումները կանանց հին հայեացքների դէմ այն ազդեցութիւնը ունեցան Սաթենիկի վրայ, որ նա կորցրեց իր հաւատը դէպի գիւղական կնոջ համար հաստատուած սովորութիւնները և նոյն իսկ մասամբ գիտակցում էր դոցա խելացի հիմունքներից զուրկ լինելը...

Ուրախ էր Սաթենիկը, որ իրան նշանել էին: Ամուսնական կեանքը իր բարդ կողմերով մութ, շապ մութն էր նրա հասկացողութեան առաջ, բայց և այնպէս նա երջանիկ էր, որովհետեւ մեծ շնորհ էր համարում այն, երբ աղջկայ համար փեսացու է գտնուում: Բացի այդ — տեսէք թէ ով էր Սաթե-

նիկի փեսացուն Ոսկանենց Գէորգը, որ օտարութեան մէջ էր մեծացել, քաղաքում խանութ ունէր և հարուստ էր: Նա հագնւած էր քաղաքացու նման, արծաթէ և ոսկեջրած գոգին մէջքին, ժամացույցի շղթան էլ կրծքին կախ արած... Երջանիկ էր Սաթենիկը և իր ծնողաց ուրախութեան պատճառով. որքան մթնած են լինում ծնողաց դէմքերը, երբ նրանց աղջկանը ուզող չի լինում. որքան փանջւում է խեղճ աղջկայ սիրտը, երբ նա զգում է, որ ինքն է ծնողաց տխրութեան և անբաւականութեան պատճառը, ինքն է ամբողջ փան ծանրութիւնը և որ եթէ նա գեպնին մնալու լինի՝ իր գոյութեամբ և բախտով փան վրայ մի արատ պիտի բերէ: Ի՞նչպէս ուրախանալ այժմ:

— Ի՞նչ կը լինէր, քեզ մայրաղ, Ասուած, ասում էր ինքն իրան Սաթենիկը. — որ իմ փոքր քոյրն. էլ իմ հասակին հասնելուն պէս էսպիսի մի բախտի արժանանար:

Եւ նա մտածում էր իր նոր և մօտազայ գրութեան մասին: Ամուսնական կեանքի մութ, վարագոյրի ետև թագնւած, բայց խորհրդաւոր և հրապուրիչ գաղտնիքը ալեկոծում էր Սաթենիկի հոգին և պաշարում նրան քաղցր ու դիւթական ցնորքներով: Միտքը անցնում էր և այն փան վրայ, որի հետ նա կապելու էր իր կեանքը. և նրա ուրախութիւնը աւելանում էր մի բանով ևս:

— Մի սկեսուր, «ինքը» (Գէորգը), մէկ էլ ես,

մորածում էր Սաթենիկը. — ոչ փեղր կայ և ոչ փեղ-
րակին, որ խռովութիւններ պատահեն, ջրկենք:
Գլուխս քարշ՝ իմ գործին կը կենամ և ոչ ոք ինձ
չի խանգարիլ: Սրանից էլ լաւ բան: Մեր հարեան
Մեւքումի փունը էն ինչ է. երկու փեղրակին օր չի
լինում, որ իրար հետ կռիւ չանեն, իրար որդի
չթաղեն: Ասենք դա մարդուս՝ իրանից է, բայց էլի
եթէ դու լաւ ես, իսկ ընկերդ վափ, էն ժամանակ
ինչպէս կառավարես: Էսպէս լաւ է. ոչ ոք չի խան-
գարիլ: Համ էլ նշանածս քաղաքում մեծացած
սղամարդ է. կուզի, որ քաղաքացու կնկայ նման
ազար լինեմ: Ի՞նչու սիրի ես անխօս մնամ մեր
ազգականների մօտ. ի՞նչու ես իբր հարս առանձին
սիրի հաց ուտեմ, երեսս մի կողմ դարձրած, որ
սկեսուրս չսրենի. ինչու գլխիս սարքը հին ձևի
սիրի լինի, մի փութ ծանրութիւն գլխիս դրած:
Յիմար և աւելորդ բաներ են էս ամենը. իսկ մարդս
էլ դրանց հակառակ կը լինի:

Եւ Սաթենիկը փնդային անհամբերութեամբ
ու սրտապրոփ սպասում էր այն օրին, երբ զու-
նան առաւօտը կանուխ իր զիւ ձայնը կը բարձրացնի
Ոսկանենց տան կարին, դուրս թողնելով իր սրտի
խորքերից ոգևորիչ, հոգի ալեկոծող և հարսանեաց փո-
նին խորհրդաւոր նշանակութիւն տւող «սէհէարին»¹⁾:

¹⁾ Տասնեակու միմեանց կապած պարսկական եղա-
նակներ:

III

Մի դժւար վճռելու հարց էլ կար մինչև հար-
սանեաց օրը, որ Ոսկանենց Քամամին այնքան ան-
հանգստութիւն և սրտնեղութիւն պատճառեց: Տղան
պահանջում էր, որ հարսի գլուխը քաղքի ձեով
կապած լինի: Նրա հետ աղջկափէրը համաձայն էր.
հակառակում էր միայն սրտի մայրը: Քամամը ոչ
մի կերպ չէր կարողանում հաշտել այդ մտքի հետ,
մանաւանդ որ իր հարսը առաջին օրինակն էր լի-
նելու ամբողջ դիւղում: Երկար դիմադրութիւններից չե-
րոյ պառաւը սիրտած եղաւ զիջել որդուն՝ փես-
նելով նրա վճռականութիւնը: Սրտասուքը այս ան-
գամ էլ չազդեց քարասիրտ սրտի վրայ:

— Անաս չունի, որդի, ասում էր Քամամը. քո
ասածով թող լինի, միայն թէ բերած հարսդ հնա-
զանդ խիղան լինի:

Հարսանիքը փառաւոր կերպով կատարեցին:
Պառաւ Քամամը այդ օրն իր երջանկութեան գա-
լութնակէտին էր հասել: Միայն մի անգամ նա
փրեց, երբ որդին իր նոր զգեստը հագած՝ պապ-
րաստում էր աղջկատուն ուղեւորելու: Այդ միջո-
ցին Քամամը չիշեց իր դժբախտ ամուսնուն, որը
չարժանացաւ որդու «կանաչ-կարմիրը» կապելու
հանդիսին, և արտասուեց: Երբեմն երբեմն Քամամի
մտքով անցնում էր այն, որ հարսը իր ընտրած
աղջիկը չեղաւ. բայց այդ, որ ժամանակ առ ժամա-
նակ անախտ զգացմունք էր առաջացնում նրա մէջ,

Թամամը աշխատում էր հեռացնել իր գլխից, մոռանալ ամեն ինչ և ամբողջապէս նւիրել որդու ուրախութեանը։ Արտաքուստ նա իրան վերին աստիճանի ուրախ և երջանիկ էր ցոյց տալիս։ Ո՛րքան նա պարեց այն ժամանակ, երբ հարսն ու փեսան մականների յաղթական երգերի ուղեորութեամբ փան բակը մտան։ Այնքան պարեց Թամամը, որ զուռնաչինները քիչ մնաց յոգնէին։ Կտուրներից ղիտող կանայք համարեա ամենքը նկատեցին այդ և մնացին զարմացած։

— Թամամ բաջուն փեսէք է, ասում էին նրանք. — ուրախութեանը էլ յափ ու սահման չկայ։ Հաւատա որ թողնես՝ մինչ իրիկուն հարսի ու փղի առաջ էգպէս պար կը գայ։

Պարեց, պարեց Թամամը, վերջը մօտեցաւ հանդիսի հերոսներին, համբուրեց նրանց և ասաց.

— Ազին ձեզ մատաղ լինի, համեցէք փուն։ Ա՛յ թագաւորի մականներ, ամենքդ զոնաղ էք, համեցէք։

Թնդաց մականների խրոխտ ուռան և հանդէսը ներս մտաւ փուն

.
Հանդերձը վերցնելուց չեփոյ Թամամը նորեկ հարսին կանչեց իր մօտ, նրան մի քանի խորհուրդներ տաւ և աւելացրեց, թէ մարդուդ հնազանդ լինիս։ Հարսը, որ դեռ իրաւունք չէր ստացել սկսուրից նրա հետ խօսելու, գլուխ տուեց, համբուրեց

նրա ձեռքը և զնաց քնելու միայն այն ժամանակ, երբ պառաւը անկողին մտաւ։

Հեփեկալ առաւօպը Սաթենիկը շափ վաղ վերկացաւ քնից, իսկոյն հագնւեց և զնաց փան բակը աւելելու։ Զրի գնալու կամ կովերը կթելու իրաւունք դեռ չունէր. նորահարսը մի քանի օրից չեփոյ միայն կարող է փնից ելնել։

Այդ առաւօպ Սաթենիկը իրան կորցրածի պէս էր զգում և շարունակ գտնւում էր երազների մէջ։ Մեղրամսի առաջին գիշերը հանգիստ չէր տալիս նրա մտքին ու երեւակայութեանը։ Ամուսնական մութ վարագոյցը բարձրացել էր նրա աչքերից, փեղի տալով խորհրդաւոր փեսարանի. և հրապուրիչ գաղտնիքը լուծւել էր նրա առաջ։ Սաթենիկը երբեմն ցնցւում և կարմրում էր, յիշելով այդ ամենը. ամօթի զգացմունքը պաշարում էր նրան և նա աշխատում էր ամեն ինչ մոռացութեան տալ։ Սակայն շար յամառ էին շլացուցիչ, ցրող մտքերը և դոքա հանգիստ չէին տալիս նորահարսի բորբոքած երեւակայութեանը։ Սաթենիկը ամեն ինչ կատարում էր մեքենաբար. թէև նրա ձեռները գործում էին, բայց միտքը այլ փեղ էր պտոյտներ գործում. . .

Մի առ ժամանակ նրան այդ դուրսից հանեց սկեսուրը, որ եկեղեցուց վերադառնալով, հարսին իր մօտ կանչեց և փարաւ փան բոլոր անկիւնների հետ ծանօթացնելու։

— Ականջումդ ամեն ինչ պինդ պահիր, եզրա-

փակեց Քասամը հարսին զանազան խրատներ և պատուէրներ փալուց չեւոյց. — չսխալւես, իմ սիրտն էլ նեղացնես, քոնն էլ: Որ մոռացար, մի բան իմ ուղածով, իմ քէֆով չեղաւ, ականջներդ կ'ոլորեմ:

Քասամը վերջին խօսքերը հանաքի ձևով արտասանեց և ծիծաղեց: Նորահարսն էլ խնդաց և գլխով ու ձեռով հասկացրեց, թէ ամեն ինչ լաւ կը կատարի:

Սաթենիկը պառաւ խրատները լսում էր առանց վրդովւելու կամ զայրանալու: Սկեսուրի ասածները նրան մինչև անգամ խրախուսում էին ամենայն եռանդով ներկելու հարսի կոչմանը և ցոյց տալ ամենքին շնորհալի անութեամբիւն: Սակայն նորահարսն իր հարսնութեան հէնց առաջին օրերում անչաշոգութեան հանգիստեց:

Մի կիրակի Քասամը պատուիրել էր Սաթենիկին մեղրով եղուծու անելու: Կէսօրեան մօտ էր, որ հարսը՝ թաւան օջախի վրայ դրած՝ եղուծու էր պատրաստում: Կարմրած իւղի ծանր հոտը տարածւել էր Ոսկանենց թաղում, և հարեան կանայք, պառնալով միմեանց, ասում էին.

— Էհր', Քասամ բաջին եղուծու է անել տալիս. երեւի ուզում է հարսի մատներին շնորհքը փորձել: Համ էլ դէ քէֆի մէջ է. տղան եկած, թաղա հարսը տանը...

Օջախի առաջ դրած էր մի ձենապակէ պնակ, որից մի դիւժին Գէորգն էր բերել իր հետ: Հարսը

եղուծուն դրա մէջ պիտի սեղան բերէր: Սաթենիկը մի րոպէով սենեակ մտաւ՝ սկեսուրից մեղր ուղելու: Քասամը բարձրացաւ նստած տեղից, բացեց սենեակի պատում թողած փոքրիկ պահարանը, իր ձեռքով կծուճից մեղր հանեց, մի սկաւառակի մէջ դնելով տաւ հարսին և պահարանը նորից կողպեց: Սաթենիկը մեղրով սկաւառակը ձեռին դնաց դէպի օջախը: Նրա բացակայութեանից օգտւելով՝ մի հաւ բարձրացել էր օջախը և կտրահարում էր ձւի կճեպները: Նկատելով Սաթենիկի մօտենալը՝ հաւը իրան կորցրեց, լծուկութեց դէս ու դէն, թըրպըրտաց և վայր ձգեց ձենապակէ պնակը: Հաւը փախաւ, բայց ամանը փշրեց և չրըխոցը հասաւ պառաւ Քասամի ականջին:

— Էս ի՞նչ էր, դոչեց նա սարսափահար և վեր թռաւ տեղից:

— Անուէր մնաս դու, այ հաւ, բացականչեց Սաթենիկը կամացուկ, յուզւած և զողզոջուն ձայնով.
— քո տէրը մեռնի...

Նա բնազդօրէն սկսեց ժողովիլ պնակի կտորները, կարծելով, թէ կարող է կորուստը ետ դարձնել:

— Էս ի՞նչ է, գոչեց սկեսուրը սարսափած՝ մօտենալով հարսին. — քո ձեռները չորանան... Աղջի, ինչու զգոյշ չես վարւում. պա քեզ ի՞նչ եմ ասել: Վաշ, վաշ... Կորաւ, ջուրն ընկաւ դնաց...

Հարսը ձեռով-գլխով հասկացրեց, թէ հաւն արաւ:

— Հաւի տէրը մեռնի, քո էլ... Ի՞նչ էր եկել քերանս հաա... Աղջի, պա հաւը հստեղ ինչ է անում:

Հարսը ձւի կճեպները ցոյց տւեց, կամենալով հասկացնել, թէ հաւը կճեպները քրքրում էր:

— Աղու 1) դառնայ էդ եղուձուն... Աղջի, մի շաբաթւայ հարս ես, որ հսպէս փորձանք ես բերում մեր գլուխը, պա յետոյ քո ճարը ի՞նչ է լինելու. ձեռքիցդ բան չի պրծնիլ... Մի գիւժին 2) էր, հիմա ֆնաց տոսն և մէկ հաւ... վա՛շշ...

Թամամը կռացաւ, ամանի կտորտանքներից մի քանիսը վերցրեց, ափսոսանքով դէս ու դէն շրջեց ու շարունակեց.

— Ձեռներդ չորանան. պա էս աչքի լոյսի նման ամանը վեր ընկնի կոտրւի... Հեռու կաց տեսնեմ... Գնա մի ուրիշ աման բեր...

Սկեսրի իւրաքանչիւր խօսքը թունաւոր նեփի պէս խոցում էր նորահարսի մատաղ սիրտը: Ի՞նչ անէր Սաթենիկը. ինչպէս արդարացնէր իրան. լեզու չկար: Նա կարմրում էր, համբերութեամբ փանելով վրդովմունքի և վիրաւորւած ինքնասիրութեան ամբողջ ծանրութիւնը: Ի՞նչու նա այդպէս անզգոյշ եղաւ, կճեպները դէն շշարտեց, ամանը սկզբից մի այլ տեղ չդրաւ: Ի՞նչու բակի դուռը չէր փակել, որ հաւը ներս չմտնէր: Այսպէս թէ այնպէս, բաց դա մի անսպասելի և սպաւորահական դիպած էր, որի մէջ

1) Թոյն.— 2) Դիւժին (ռուսերէն) = 12:

ինքը մեղք չունէր. մի՞թէ նա այդպիսով արժանի էր սկեսրի խիստ և վիրաւորիչ յանդիմանութիւններին:

Սաթենիկը այլապէս արտով սենեակ մտաւ և մի այլ աման բերաւ: Թամամը դեռ շարունակում էր իր ախն ու վախը և նախատինքները: Եւ այդ ամենը... մի պնակի համար:

Որդին տուն եկաւ ճաշելու: Մայրը բարկացած իսկոյն յայտնեց նրան դժբախտ դէպքը և սխեց որդու առաջ ևս նախափել հարսին:

— Մարդն ես, ա՛յ որդի, դու էլ խրատիր, որ զգոյշ լինի, խելօք, կարգին շարժի:

— Այ սգի, մի՞թէ արժէ մի ամանի համար սիրտ նեղացնել: Կը գնամ օտարութիւն, էլի կը բերեմ՝ ինչքան և ինչ տեսակի որ ուզես, ի՞նչու ես սիրտդ նեղացնում, հարսի սիրտն էլ կոտրում: Դէ առանց քո ասելու էլ նա փխրած կը լինի. դու էլ որ ասում ես՝ նրա ցաւը կրկնապատկւում է. լաւ չի:

✓ — Դէ՛հ, դու էլ որ հիմիկանից էդպէս խօսացիր, պրծաւ գնաց. երանի ինձ էլի... Այ տղա, պա որ դու իմ երեսին կնկանդ մօտ էդպէս ես խօսում, նրան թեւերիդ փակն ես առնում, պա էն հարսը էլ ինձ կը լսի, կը նայի, որ ինչ...

— Լաւ, հերիք է, ասաց Գէորգը կտրակի, սըրտ-նեղութիւն մի գցիր. հաց բերէք ուտենք:

— Մին էլ առում եմ. միւս անգամ իմ առաջ էդպէս բան չասես կնկանդ համար:

Սեղանը փռեցին և հացի կացան: Մայր ու որդի միասին էին ճաշում: Հարսը իր երեսը դարձրել էր փան մեծից և ճաշում էր առանձին: Սկեսուրի հետ նա դեռ անխօս էր և ուրեմն նրա հետ սեղան նստելու իրաւունք չունէր դեռ:

Հարսը ճաշին քիչ կերաւ: Նրա ակորթակը չքացել էր. աջնքան սաստիկ էր նրա հոգեկան յուզմունքը: Սկեսրի խիստ, կոպիտ և ցուրտ յանդիմանութիւնները մտաւրանջութեան էին ենթարկել ջահել հարսին. արդեօք սկեսուրը մի՞շտ այդպէս էր վարւելու նրա հետ:

Ամուսինը նկատեց կնոջ արտութիւնը և մօր բացակայութեան ժամանակ ասաց.

—Շատ միտք մի անիլ: Պառաւ կնիկ է. ասածներին ուշք մի դարձնիլ:

Թամամի ցաւն ու դարդն էլ այն միտքն էր, թէ արդեօք հարսի կատարած սխալը սպաւորական և բացառիկ դէպք էր, թէ դեռ էլի կրկնւելու էր:

Չարաբաստիկ դէպքը նրան կրկին անգամ համոզեց, որ հարսը, որին ինքը չէ հաւանել ու ընտրել, իր համար ցաւ ու կրակ է դառնալու:

Մի անգամ երեկոյեան դէմ Սաթենիկը ջրի էր գնացել: Աղբիւրից վերադառնալուց գիւղամիջի գլխին նա սպասեց իր մօրը, որ ջրի էր գնում: Նրանք կանգ առան և մայր ու աղջիկ զրոյցի կացան: Մայրը հարցնում էր աղջկանից, թէ արդեօք նա ինչպէս է զգում իրան մարդու փանը, սկեսուրն

ու ամուսինը ինչպէս են վարւում հետը: Սաթենիկը գոհ էր ամուսնուց, բայց զժգոհ սկեսրից: Նա պատմեց մօրը պնակի դէպքը: Մայրը խրատեց նրան զգոյշ լինել և սկեսուրին լսել: Այդպէս նոքա զրուցում էին, իսկ Թամամը համբերութիւնը հասած՝ սպասում էր հարսին, որ ջուր բերէ և սամաւարը կրակ զցէ:

—Ձեկաւ, զանգաւում էր ինքն իրան Թամամը,— չեկաւ. ետեւէ ինչ դառաւ էս հարսը, որը կոտորեց՝ մնաց ճանապարհին: Պա հարսը ջրի գնաց էսքան ուշանայ:

Թամամը համբերութիւնից ելաւ և սկսեց իր բարկութիւնը որդու վրա թափել:

—Այ աղի, ակոր իզուր ես նեղացնում սիրտդ. դէ երեւի մի բան կայ, որ էսպէս քիչ ուշացել է. կէս գիշեր խօսմ չի կարել: Ժամի զանգակները հիմիկս փռեցին:

—Առում ես էլի, պա ես հիմա ինչպէս ժամ գնամ. հարսս որ փանը լինէր, կը գնայի:

—Ժամ ես ուզում զնա. հրէս ես փանն եմ. ինչ կը դառնայ, որ փունդ առանց կնիկ թողնես գնաս:

—Պա կը լինի, պա դա լսած բան է: Ի՞նչու ակոր. ջրի գնացիր, իսկոյն ետ եկ:

Եւ դուրս եկաւ սենեակից: Թամամը բարձրացաւ փան կտուրը և, դառնալով իր հարեանուհու աղջկան՝ Սոնային, որ ջրափեղից նոր էր վերադարձել, հարցրեց.

— Սոնա, մեր հարսը ի՞նչ դառաւ. չեկաւ մինչեւ հիմա. ախր քեզ հետ միասին գնաց:

— Գիւղամիջի գլխին մօր հետ խօսում էր: Շուտով կը գայ:

Ոչինչ: Հասաց ալլ ևս Թամամը: Նա իր բուժը բերանին տարաւ և լի կատաղութեամբ իջաւ ներքեւ:

Այդ բոպէին կու ժը շալակն առած և հեւալով բախ մտաւ Սաթենիկը: Իմանալով սկեսրի բնաւորութիւնը՝ նա շատ արագաքայլ էր անցել ճանապարհը, որպէս զի իր ուշանալը աննկատելի դարձնի: Հարսի թշերը վարդեր էին դարձել, իսկ սևորակ աչքերը այրուում էին կրակի պէս: Երեսին խաղում էր մի մեղմ ժպիտ:

— Աղջիկ, դու ի՞նչ դառար, գոչեց նրա վրայ սկեսուրը բարկացած, — ջահիլ հարսը գիւղամիջում կը կանգնի կը խօսի, էդքան էլ համարձակութիւն... Թո՛ւ... Աղջիկ, պա դու գետինը չես մտնում. ի՞նչ կ'ասեն տեսնողները: Մին էլ որ էդպէս բան պատահի, կաշիդ գլխովդ կը հանեմ, լսեցի՞ր:

Եւ քոչերը հաղնելով շտապեց դէպի եկեղեցի:

Սաթենիկը ոչինչ չկարողացաւ պատասխանել. անխօս էր դեռ: Մեղմ ժպիտը իսկոյն չքացաւ նրա երեսից: Տխրութեան քօղը իջաւ, ծածկեց նրա դէմքը, աչքերը արտասուկալեցին և նա, դառնալով ամուսնուն, լացակումած ասաց.

— Մինչև Թրբ էսպէս մնամ. մի բան է ասում — չեմ կտրողանում պատասխան տամ: Ինձ իզուր տեղից

նախադում է — չեմ կարողանում երկու խօսք ասել, որ իմ անմեղութիւնը նրան ցոյց տամ, կամ հասկացնեմ, որ ինքը անարդար է խօսում: Մինչև Թրբ. մի ամուսն հարս եմ. հերիք չէ որքան անխօս մնացի: Դու էլ չես պահանջում, որ մայրդ ինձ խօսցնի:

Սաթենիկը խոնարհեց իր գլուխը. դառնաշունչ հեկեկանքը խեղդեց նրա ձայնը: Ամուսինը գուրգուրեց, քաջալերեց մտադ կնոջը և խոստացաւ, թէ մօրը կը խնդրէ, որ հարսին անպատճառ խօսցնէ:

— Անխելք սովորութիւն է, ի հարկէ, ասաց Գէորգը, բայց միանգամից չի կարելի վերացնել, սիրելիս. հարկաւոր է կամաց-կամաց: Փոքր էլ համբերիր: Ես նոյն իսկ մտադիր էի, որ մեր տուն եկած հէնց առաջին օրը պահանջեմ Դօրիցս, որ քեզ խօսեցնի. բայց անկարելի էր յանկարծ: Իսկ դու էլ մի՛ վհարւիր:

IV

Սկեսրի տրտունջները անվերջ էին: Խօսում էր աչն ամենի վրայ, ինչ որ հարսը նրա քէջով կամ կամքով չէր կատարում: Մարդու հոգի էր սղոցում իր շարունակ դժգոհութեամբ ու գանգաւորութեամբ և պահանջում էր հարսի կողմից անպայման հնազանդութիւն:

Հարսի երեւակացած երջանկութիւնը օդն էր

ցնդել: Սկեսրի կողիւ վարմունքը խոցուում էր նրա սիրտը: Սաթենիկը տխուր էր և ճնշւած: Յուսախաբ կեանքի առաջին խոչնդոտի հանդէպ ընկձւած էր արդէն և վհալութիւնը մղմուղի պէս մաշում էր նրա զգացուն սիրտը: Սաթենիկը չիշում էր իր հայրենական տունը, այնպէս վաշեւած ազատութիւնը, իր վաղաթառամ անհաշիւներն, և այդ ամենն աւելի էին սաստկացնում նրա սրտի կսկիծները: Զահէլ հարսը իրան միայնակ էր զգում այդ տանը և որբացած: Ամուսինն էր առ այժմ նրա միսթարութիւնը, բայց նա էլ պառաւի հետ խիստ չէր վարւում, աշխատելով մի կերպ շարժարեւել:

Սաթենիկի յաճախ դանդաղները ստիպեցին ամուսնուն, վերջապէս, միջամտել և խնդրել մօրը, որ սա հարսին խօսեցնի:

—Այ աղի, ասաց նա, ախր հարսը խեղճ է. էլ տանն ուրիշ մարդ չկայ. ես եմ դու. ես տանը շատ չեմ նստում, նստած ժամանակս էլ հարսը մնում է անխօս. ախր պա խեղճ չի, պա նրա սիրտը չի ուզում քեզ մի քանի խօսք ասել: Ախր ջահիլ է, վհալութւմ է: Պա Աստուած լեզու է տւել մարդուն, որ չխօսանայ:

—Գէորդ ջան, պատասխանեց մայրը ծանր ու բարակ, — դու իմ որդին ես. ինչպէս էլ լինի, խելքդ իմ խելքից շատ չի կարող լինել: Ժամանակը կը գայ կը խօսեցնեմ: Հիմա շուտ է. թող էսպէս մնայ, որ մեծի պատիւ ճանաչի:

—Աղի, խնդրում եմ, թող խօսայ. իմ խաթրուարա էդ: Հասկացող, պատւաւոր և համեստ հարսը միշտ մեծի պատիւը կը պահի, նրան կը յարգի, իսկ իրը հարսը թէկուզ անխօս էլ լինի՝ իրանից մեծին ամեն կերպ կարող է կծուրել: Դա չի կախւած խօսալուց կամ չխօսալուց: Սրինակներ շատ տեսած կը լինես:

—Ձէ, էլի չխօսալն է լաւ: Ի՞նչ ես վաղում. թող հլա մի կէս տարի անցնի: Քեզ հետ խօսում է, չի կշտանում:

—Ախր, աղի, ասաց Գէորդը վճռական եղանակով, — հրէս երկու շաբթից յետոյ ճանապարհ եմ ընկնելու օտարութիւն. որ հարսին չխօսացնես մինչ էդ օրը՝ ասելու եմ առանց քո հրամանի խօսայ:

—Կնորդ է որ, — ասաց Թամամը սաստիկ կրքով, — ծամերը կը քանդեմ, ծամերը:

Գէորդը յայտնեց կնոջը մօր պատասխանը: Սաթենիկը մի թեթեւ անէծք ուղղեց պառաւի հասցէին, յետոյ խոնարհեց գլուխը և կրկին խորասուզեց տխուր մտքերի աշխարհը: Մարդը նրան յուսադրում էր ուրախ կենալ, իսկ նա վշտալի եղանակով և դառնութեամբ պատասխանում էր.

—Ինչպէս ուրախ լինեմ. դու էստեղ ես որ մայրդ հետս էսպէս է վարւում, պա քեզանից յետոյ ինչ է լինելու: Հիմա ինչքան չլինի — քեզանից քաշւում է. յետոյ, որ ես մենակ մնամ, գլխիս ով գիտէ ինչ քար ու կարկուտ է մաղելու: Դու էլ գնում ես...

Եւ խեղճ հարսը նորից արտասուեց:

— Եղբան անխիղճ չի լինիլ, սիրելիս, պարտախանեց Գեորգը փաղաքշանքով, մի կերպ եօլա փարպա ինչ անենք. մեր մայրն է. կարելի է դէն ձգել, կարելի է դուրս անել: Պառաւ կնիկ է. շատ ուշք մի դարձրու ասածների վրայ եւ մի կերպ եօլա փար:

— Եօլա փար, վրայ բերեց Սաթենիկը հեգնութեամբ, — քեզ ինչ. թող իմ հոգին դուրս գայ, դու չես խօս մանջւողը: Հեշտ է միշտ եղբան կռոց լսելը: Մի բան եմ անում, որ քեֆովը չի լինում կամ իր ասածով, թէկուզ դա անպեղի էլ լինի, գիրտն ինչ օջին է դնում զլխիս. հացհոջանքներ, անէծքներ է թափում թէ իմ եւ թէ ծնողացս գլխին: Ինչպէս ուրախ կենամ:

— Մի կերպ համբերիր, սիրելիս, հրէս գնում եմ խանութս հաւաքեմ բերեմ գիւղը. նրանից յետոյ միշտ քեզ մօտ կը լինեմ եւ չեմ թողնիլ, որ մէրս քեզ նեղութիւն պարճառի: Համ էլ դէ էն ժամանակ դու խօսում կը լինես, էլ խեղճ չես մնալ. ծուռի դէմ ուղիղը կ'ասես. նա էլ կնիկ է. քեզ կը սովորի եւ կամաց-կամաց լեզուն իրան կը քաշի:

Ամուսնու ցուած ապագայ յոյսով փոքր ինչ թեթեւացած՝ Սաթենիկը դուրս եկաւ փան կտուրը ազատ շունչ առնելու: Հարեանի աղջիկ Սոնան, որ արդէն հարսնացու աղջիկ էր, կանգնած էր իրանց կարին եւ գուլպայ էր գործում: Սաթենիկը մօտեցաւ նրան, մի խոր հոգոց հանեց ու ասաց.

— Սոնա, որ քեզ ուզող լինի, մարդու չգնաս. էս կեանքը կեանք չի, այլ ցաւ ու կրակ: Ափսոս չէ ազաբ կեանքը:

Սոնան ոչինչ չգրաւ պարտախանելու. նա միայն ամօթխածութեամբ աչքերը գետին խոնարհեց ու ժպտաց.

— Որ մենակ դու լինես ու մարդդ, էլի հլա ոչինչ. բայց որ սկեսուր ունենաս, էն էլ իրասածի, անհաշտ սկեսուր, վայը քո ճարին: Եթէ խեղճ կտրի, մարդու չես գնալ. կը գնաս, կը փոշմանես:

— Ինչո՞ւ. պա էնքան աղջկերք մարդու են գնում, ինչու չեն փոշմանում, — պարտախանեց Սոնան, դէմքի նոյն արտայայտութիւնը պահպանելով:

— Մէկ հարցրու նրանցից, շատերը քեզ միւսնոյն բանը կ'ասեն:

Սաթենիկը այդ խօսքերի հետ միասին մի խոր հառաչանք արձակեց եւ սկսեց գիրտն Սոնայի ձեռքի գուլպան:

Երեկոյեան դէմ էր: Պառաւ Թամամը նկատեց նրան եւ կանչեց փուն:

— Ինչ ես կանգնել կարին եւ խօսում. ջահիլ հարսն ես, պա քեզ վայել է: Փողոցով մարդիկ են անցնում, ախր տեսնում են: Մարդդ էլ ասում է՝ շատ եմ խօսում: Ի՞նչ հողը փայ գլխին մէրը, որ չխօսի:

Սաթենիկի դէմքի վրայ, որպէս պարտախան, արտառնալ արտայայտող մի կնճիւ ցնցւեց եւ նա արտ-

գուլթեամբ հեռացաւ սկեսրից: Նրա բարկութիւնը նկատեց թամամը:

—Աղջի, էդ ո՞ւմ վրայ ես նեղանում, — գոչեց սկեսուրը, — ո՞ւմ վրայ ես թողդ թափ փալիս. ես քո ճիւղին եմ: Եդ ո՞ւմ մօտ ես սովորել. այժմ քո խրատը աչքերը քօռանան: Եդ էր պակաս, հո՞ւ... Տղաս էլ ասում է՝ հարսին խօսցուր. դէ խօսցուր, հը՛: Այս ամենը թամամը ասում էր բարձրաձայն, որ որդու ուշադրութիւնը գրաւի:

—Ա՛յ աղի, դէ հերիք է էլի, ասաց որդին զայրացած, — ախր ամենադատարկ բանի վրայ կը խօսան: Հարսը ինչ մեղք արեց, որ կարին կանգնեց. է, թող փողոցով անցնող փղամարդիկ պեսնեն, խօժ հարսիդ չեն ուտելու: Ախր ինձ էլ ես համբերութիւնից հանում:

—Դո՞ւ էլ էդպէս ես ասո՞ւմ. ապրես: Կնկանդ բաց թող, ինչ ուզում է թող անի: Ել ես ոչինչ: Ում համար եմ էսքան հաչում, հը՞, բարձրացրեց իր ձայնը թամամը՝ արտասուելով, — ո՞ւմ համար: Մէրը կը բարկանայ, կը մըրթմըրթայ, կը հաչոցի, հարսին կը թակի, բայց էդ ամենը իր որդու օգուտի համար է անում, որդուն սիրելով է անում: Իսկ դու դրա փոխարէն սրտիս դիպչում ես և ինձ լացացնում: Ապրես...

—Աղի, ախր խի՞ էդպէս ես խօսում, — բացականչեց որդին համբերութիւնից դուրս եկած, — պա ես քեզ մի անգամ մի ցուրտ խօսք ասել եմ: Դո՞ւ

ես իզուր տեղից քո սիրտը նեղացնում. ես ինչ մեղաւոր եմ:

—Լաւ, լաւ, զիտեմ. դու գնա՛ կնկանդ ծափով պար եկ. մօրդ պատիւը քեզ համար ոչինչ...

—Աղի, Աստուծ վկայ, հերիք է. էնպէս բաներ ես խօսում, որ...

—Ես սուս կը կենամ, միայն թէ կնկանդ քէֆը խարաք չդառնայ: Դու նրա կամքով նստիր վեր կաց: Մօր ջանը թող դուրս գայ. նրան ո՞վ է լսողը:

Եւ լռեցին: Լուռ ու մունջ, առանց միմեանց երեսի նայելու, խռովածի պէս՝ ընթերցին և սուս ու փուս ննջելու հեռացան: Սաթենիկը ամբողջ գիշերը անքուն անցկացրեց: Դէմ աւ դէմ կանգնած անհաշտ սկեսուրը քուն չէր փալիս նրա աչքերին և հոգեմաշ մտածումները խանգարում էին նրա հոգու հանգստութիւնը:

V

Գէորգի ուղևորւելու ժամանակը մօտենում էր: Դրա հետ միասին Սաթենիկի կրճքի վրայ օրէցօր ծանրանում էր այն քարը, որ վաղուց ճնշում էր նրան: Վերջին օրերը նա չաճախ, մանաւանդ երեկոները, ամուսնու հետ միայնակ ֆալուց լաց էր լինում:

—Գնում ես, ինձ մենակ թողնում, մըջմնում էր Սաթենիկը, — ինձ էլ հետդ փար: Պա ինչ պիտի լինի իմ ձարը մօրդ ձեռքին...

Ամուսինը խնդրում էր նրան թողնել այդպիսի փոխուր և յուսահատ մտքերը, մխիթարում, յուսադրում էր նրան և խոստանում շուտ վերադառնալ։ Սակայն Սաթենիկի դէմքին վաղուց էր դրոշմաժարութեան կնիքը այն օրից, երբ նրա երեակայած ամուսնական երջանիկ կեանքը թունաւորւել էր շնորհիւ մի անձնաւորութեան, որը ամբողջովին հակառակ էր Սաթենիկի սիրած ուսուցիչ Ռբապտեանի քարոզած գաղափարներին և ձգտումներին։ Ամուսնական կեանքը նրան մի քայլ էլ առաջ պիտի մղէր այն ճանապարհով, որ բաց էր արել նրա առաջ հոգեւոր դպրոցի աշակերտը։ Բայց ահա մի հսկայ խոչնդոյ կանգ էր առել նրա առաջ և մաշում էր ջահէլ հարսի հոգեկան ու բարոյական ոյժերը։ Արդեօք նա կարողանալու էր դիմանալ այդ ցաւին։

Որդու օտարութիւն գնալուց երեք օր առաջ սկստւել խօսքրեց հարսին։ Գէորգը ստիպեց նրան այդ անելու։

— Մարդդ գնում է, ասաց Թամամը, մենակ ես մնում։ Հիմա խօսաւ Տանը մնում ենք ես ու դու։ Հնազանդ կաց, խոնարհ ու խելօք, որ ես էլ ուրախ լինեմ, դու էլ։ որ կարողանանք սիրով ապրել և հպարտութեամբ թշնամոց աչքերը հանել։ Առ էս մանէթը և խօսա։

Սաթենիկը քիչ պատանւելուց յետոյ ընդունեց արծաթէ դրամը և առաջին անգամ խօսաց.

— Շնորհակալ եմ, Ասրուած պահի փրկի։

Այս դէպքը թեթեւութիւն պատճառեց նրա ճնշւած կրծքին, թէև միւս կողմից մտադ ճարսի սիրտը շարունակ լաց էր լինում ամուսնու հեռանալու պատճառով։ Իսկ մի անախորժ ընդհարում կարծէք դիմամբ եկաւ աւերելու Սաթենիկի ուրախութեան նշոյլները։

Նորահարսը փոքր նստած՝ ամուսնու համար սպիտակեղէն էր կարում։ Նա ինքն էր ձեւել ամեն ինչ և ինքն էլ կարում էր։ Սկստւել էր նրա աշխատանքի վրայ։ Մի շապիկը արդէն պատրաստ էր։ Թամամը վերցրեց այդ և աչքի անցկացրեց։ Շապիկի կրծքին երկու կոճակ էր արւած, իսկ թեւերի դաստակները լայն էին կարւած և առանց կոճակի։

— Էս ի՞նչ ես արել, աղջիկ,— նկատեց Թամամը զայրոյթով, — ի՞նչ հարկաւոր է կրծքին երկու կոճակ. զուր է, մէկը հերիք է։ Պա դաստակներին ինչո՞ւ չես կոճակ արել. էսպէս լայն բան կը լինի. քանդիր, դաստակները նեղացուր և կոճակներ կարիր։

— Կրծքին երկու կոճակ է հարկաւոր, որ բաց չլինի, պատասխանեց Սաթենիկը համեստութեամբ, — իսկ դաստակներին կոճակ անելը աւելորդ է, որովհետեւ լայն-լայն եմ անում. էսպէս գեղեցիկ է. նեղ դաստակները անշնորհք են։

— Անշնորհքի բան չկայ էստեղ. ինչպէս ասում եմ՝ էնպէս էլ արա։

— Այ գոհ, ախր ես փղիդ շապիկներին նայել եմ. քաղաքում կարւած է. ես էլ է՛ն տեսակ եմ կարում։

—Որ քաղաքի եղաւ՝ մեծ բան է... Ել մի երկարացնիլ. ինչ որ ասում եմ՝ էն արա:

—Խաչը վկայ, աղի, զարմանալի կնիկ ես, շապիկը բերեմ տես:

Սաթենիկը արագութեամբ վեր թռաւ տեղից, մօտեցաւ անկիւնում դրած սնդուկին, միջից մի շապիկ հանեց, որ քաղաքի կար էր, և ցոյց տւեց սկեսրին:

—Հա է, հա, գոչեց սկեսուրը բարկութիւնից, — ի՜նչ ես ցոյց տալիս... Սխառնեց կոծակի դատարկներ կը լինի. ո՞վ է տեսել: Իմ ասածը արա:

—Լաւ, տղիդ կը հարցնեմ. ինչպէս նա ուզի, էնպէս էլ կ'անեմ:

—Ի՜նչ, տղիս կը հարցնեմ, գոչեց սկեսուրը զայրացած, — խի, ես ի՜նչ եմ, որ տղիս ես հարցնում: Եդ էլ իմ պատիւն է, հմա... Սխառնեց եւն հարսին խօսքը: Խօսացնում ես, վերջը պատիւդ դա է լինում:

—Ամօթ է, ամօթ, — ասաց Սաթենիկը վիրաւորաձեւ եղանակով, — մեծ կնիկ ես, դատարկ բանի համար սրտնեղութիւն մի գցիր էս տունը: Շապիկը տղադ է հագնելու. նրա քէֆով չկարեմ, քո քէֆով եմ կարելու: Սրանով խօժք պատւին չեմ դիպում:

—Սրա լեզւին, սրա լեզւին... Տես ինչպէս համարձակ-համարձակ խօսում է... Օձ կծի քեզ, քեզ խրատում ողի էլ աչքերը քօռանան: Քեզ ասում եմ էսպէս արա, դու էլ արա: Աղջի, հէնց պիտի հակառակեմ:

Սաթենիկը ոչինչ չպատասխանեց: Պառաւի վերջին խօսքերը խիստ խոցեցին նրա սիրտը: Վիշտութեամբ թախիժ պաշարեցին նրան: Սրտասուքը չէր չորանում նրա աչքերի աղբիւրներում, իսկ մատները մէքենայաբար առաջ էին տանում չարաբաստիկ շապիկ կարը:

Հետեւեալ օրը նա ճանապարհ դրեց իր Գէորգին օտարութիւն: Վշտի, թախժութեան և վհատութեան մարմնացումն էր նա այդ օրը: Նրա աչքերը կարմրել էին, այնքան լաց էր եղել նա Գէորգից բաժանելու ժամին և դրա նախընթաց գիշերը:

VI

Գէորգը արդէն Բաքու էր գտնւում: Նրա հեռաւնալուց անցել էր մօտ երեք ամիս: Գրում էր, թէ աշնանը խանութը ժողովելու և գիւղն է տեղափոխելու՝ ընդմիջապէս այդտեղ մնալու նպատակով: «Գիւղում ոչ մի խանութ չկայ, գրում էր նա, — ամենայարմար ժամանակն է այժմ. կարգին առուրուր կ'անեմ, համ էլ ձեզ համար դժար չի լինիլ»:

Սաթենիկը անհամբեր այդ օրին էր սպասում: Սկեսրին անվերջ կրկնութիւնները, թէ հարսը պիտի սկեսրին հնազանդ լինի, նրա ամեն մի խօսքը լսի, և քանի որ փոքրաւոր է, միշտ մեծի կամքով պիտի գնայ, ոչ մի գործ իր գլխի չկատարի՝ մաշում էին Սաթենիկի սիրտը: Նրա վհատութիւնը սաստկանում էր միայնութեան և անօգնութեան պատճառով, իսկ

յղիութիւնը նրան բոլորովին թուլասիրտ և զիւրազգաց էր դարձրել:

—Ա՛խ, Ասպուած, բացականչում էր Սաթենիկը յուսահատ բոպէներին, — Երբ կը գայ Գէորգը, որ մի քիչ սիրտս բացւի. սա օր չի, որ ես եմ քաշում:

Ուրախ և գոհ բոպէները հազւագիւտ էին Սաթենիկի համար: Եթէ լինում էլ էին, իրասածի սկեսուրը մի օր և է դադարի պատճառով աւերում էր խեղճ հարսի ուրախութիւնը: Սաթենիկը ամեն օր տեսնում էր իր երազած օրերի և դառն իրականութեան մէջ գտնուող անդունդը: Կեանքը կամաց-կամաց կորցնում էր նրա աչքում իր նշանակութիւնն ու քաղցրութիւնը: Նա առ այժմ իր Գէորգի յոյսովն էր ապրում և այն արարածի սիրոյն, որի անորոշ հուսկները խանդաղատանք էր պատճառում նրա հոգուն: Ձգալով իր կարարեալ անգործութիւնը փորապետող չարիքի դէմ և ներքուստ անկարող լինելով հաշտել զրա հետ՝ նա ամբողջապէս ընկղմւել էր իր մէջ և լացում էր իր դրութեան վրայ: Իսկ հոգեկան մշտադաւ ցաւը զգալի կերպով ազդում էր նրա առողջութեան վրայ: Սաթենիկը օր օրի վրայ մաշում և գունաւորում էր: Մայրը անհանդիստ էր աղջկայ դրութեան համար, իսկ սկեսուրը նրան նկատում էր.

—Ոչինչ չկայ. յղի է, դրանից է:

Հարսի ծնունդ նստելու ժամանակը մօտենում էր: Սկեսուր Թամամի միտքը այդ ժամանակ մի հարցով էր զբաղւած. «Ծնունդը աղջիկ է լինելու թէ

պողպոս: Եւ նա ամեն օր աղօթում էր. «Այ Մարիամ Ասպուածածին, դու ամեն ինչ իմ սրտով անես, մի պողպոս պարգևես իմ որդուն... Առաջին ծնունդը որ պողպոս լինի, զաւակը հօր ջանին շուրջով կը հասնի: Բայց եթէ աղջկով սկսւեց, նրանից յետոյ միշտ աղջիկ կը լինի: Ասպուած, քեզ շուրջբան, Դու լսիր իմ աղաչանքը»: Պառաւը զրա համար բոլոր սուրբերին մոմեր էր խոստանում: Բացի այդ նա հարսին էլ նախազգուշացնում էր ասելով՝

—Աղջի, որ բերածդ աղջիկ լինի, էլ ինձանից չես պրծնիլ. դուրս կ'անեմ փողոցը երեսիդ հետ միասին, լսում ես:

Սկեսուրը այդ ասում էր հանաքի ձեռով և մեղմ ժպիտը երեսին, այն ինչ զրա թելադրողը նրա սանձարձակ կամքն էր, որ հարսի վրայ նրա ոյժից վեր պարսախանաւորութիւն էր դնում...

Տալմէրը սկեսուրն էր: Մենդին ներկայ էին և հարսի մայրն ու քոյրը: Երկունքի ահեղ և սարսափելի ցաւերի ձեռքին փանջւում էր Սաթենիկը: Նա շարունակ լաց էր լինում և յուսահատ ու սրտաշարժ ծիչեր արձակում, ծկկտալով

—Վայ ինձ, մեռայ...

Սարսափելի դրութիւն, որ ծննդեկանին փանում է մինչ մահաւան դուռը և նորից ետ բերում: Մահն ու կեանքը մարտ են մղում միմեանց դէմ, իսկ նոցա ահեղ հարւածներին ենթարկւողն է մի թոյլ, գուրգուրանքի և կարեկցութեան արժանի էակ:

Սաթենիկի մայրը բռնած աղջկայ կռներից՝ յոյս և սիրտ էր տալիս նրան: Մայրը փոսուր էր. աղջրկայ տանջանքները կսկծեցնում էին նրա սիրտը: Սաթենիկի քոյրը կուչ էր եկել տան մի անկիւնում և թաշկինակը աչքերին բռնած արտասուում էր:

Սակայն այդ ամէնը ոչինչ էր պառաւ թամամի համար: Նա մինչև անգամ բարկանում էր ծննդկանի վրայ ասելով.

— Աղջի, հերիք է, քիչ զարաչութիւն ¹⁾ արա. կէսդ չգնաց. թնչ է պատահել քեզ, չմեռար խօմ... Հաւատա մենք իսկի երեխայ չենք բերել: Համբերիր էլի: Քո մէրը քեզ ինչպէս է բերել: Հերիք է. էնքան կը զըռզռաս, որ երեխի գլուխը մի փորձանք կը բերես:

Վերջապէս երկար տանջանքներից յետոյ, որ տեեց տասը ժամ, ծննդկանը ազատեց, նւիրելով իր ամուսնուն մի փափիկի աղջիկ:

Լսեց մանկան յուսահատ և աղեկատու ճիչը, որ արձակում էր նա ընդհատ-ընդհատ, երևի զարհուրելով նոր աշխարհի օտարօտի պայմաններից:

Թամամը փաթաթելով նրան խանձարուրի մէջ՝ յուզւած և կորուած սրտով մըրմըթում էր.

— Որ աղջիկ էիր լինելու, թնչու ծնեցիր: Տես է, տես իսկի ձայնը կորում է... Տէրտէրը զայ քեզ տանի:

¹⁾ Բոչայութիւն:

Փաթաթեց մանկան, ծննդկանի կողքով պառկեցրեց և, զառնալով հարսի մօրը, արհամարանքով ասաց.

— Դէ, էս էլ ձեր զոված աղջիկը. տեսար խօմ:

Խնամին, որը նոյնպէս շատ էր ցանկանում, որ ծնունդը տղայ լինի, աշխատելով ծածկել իր վիշտն ու վիրաւորանքը, ծիծաղելով պատասխանեց.

— Լաւ, խնամի թամամ, քնաս չունի. Ասուած ողորմած է. էն միւսը տղայ կը լինի: Ի՞նչու ես յոյսդ կորում: Ախր որ էդպէս ես խօսում, ծննդկանի սիրտն էլ ես կորում. պա խեղճ չի:

— Լաւ եմ անում. ինչու է աղջիկ բերում, որ ես էսպէս խօսամ: Թող տղայ բերէր, հարսիս պաչէի ղնէի ճակատիս:

Ծննդկանը ուժասպառ մեկնւած էր անկողնում և փակել էր աչքերը: Լուռ էին ամենքը: Միայն երբեմն լսում էր մանկան ճչոցը, երևի գոհ չէր իր վիճակից:

Թամամը մըրմըթով՝ փափմէրի գործերով էր կացել: Ծննդկանի մայրը նստել էր հիւանդի գլխատակին և թաշկինակով քշում էր աներես ճանձե. քին նրա երեսից:

— Փառքդ շատ, Ասուած, մըմնջում էր մայրը, — աղջիկս ազատեց ողջ առողջ, սիրտս միամտեց. քնացածը եօլա կը գնայ:

VII

Ծննդկանի քառասունքը նոր էր լրացել: Սա-

Թենիկը արդէն կազդուրւած լինելով՝ կարողանում էր զբաղւել րնային գործերով:

Մի օր արեւը մայր մտնելու վրայ էր, որ նա նստած կար էր անում: Սկեսուրը նկատեց նրան, թէ օջախ վառելու ժամանակն է: Հարսը ասաց թէ շուտով ձեռքի կարը կը վերջացնի և այնուհետք վեր կը կենայ կը վառի: Մի րոպէ ևս համբերեց սկեսուրը և ապա կրկնեց.

— Աղջի, ախր քեզ հետեմ. վեր կաց օջախը վառիր, կերակուր դիր վրան, րան առաջը աւելիր:

— Այ, դէ վեր կը կենամ էլի. ձեռքիս գործը քիչ է մնայիլ. վերջացնեմ, որ էգուց ի զուր տեղից սրա վրայ ժամանակ չկորցնեմ: Ի՞նչ կայ որ. չմթնեց խօսմ. հլա արեւը մայր չի մտել:

— Օհօհօհօ... Պապանձաւի լեզուդ, պապանձաւի... Ի՞նչպէս կարելի է. քո զիթը ¹⁾ պիտի առաջ տանես: Թաթոսենց րանը ինչ ասեմ, որ քեզ նմանին լոյս աշխարհ է հանել... Իմ ասածը թողած՝ իր էշն է ուզում քշել:

— Հայհոյիր, հայհոյիր, վրայ բերեց Սաթենիկը յուզւած և արհամարանքով:

— Պա հայհոյեմ՝ ինչ անեմ:

Թամամը հարսի ձեռքից խլեց կարը և բարկացած գոչեց.

— Դէ վեր կաց էս սհաթին:

¹⁾ Կամակորութիւն:

Բարձրացած աղմուկից մանուկը արթնացաւ օրօրոցում և լաց եղաւ: Սաթենիկը ուշադրութիւն չդարձնելով սկեսրի հրամանի վրայ՝ մօտեցաւ օրօրոցին, բարձրացրեց ծածկոցը և սկսեց ծիծ տալ երեխային: Նրա այդ վարմունքը աւելի ևս կատաղացրեց սկեսրին: Այս անգամ նա սկսեց արդէն գոռալ.

— Անզգամի ծնունդ, պատճառը երեխան ես բերել, որ քո էշը քշե՛ս:

— Այ կնիկ, կամաց խօսան, ասաց Սաթենիկը զայրոյթով, ախր ամօթ է. հարեանները լսեն ի՞նչ կ'ասեն:

— Թող լսեն, թող իմանան, որ քեզ նման մի լիրբ հարս ունեմ, որ չի ուզում ամեն բան իր ժամանակին անել. իր ժամակին օջախ կը վառեն, ջրի կը գնան, հաց կը թրջեն և սկեսուրի խօսքին չեն հակառակել:

— Լաւ է, լաւ, ընդհատեց Սաթենիկը, — Թող երեխիս ծիծ տամ, յետոյ քո ասածը կ'անեմ:

— Երեխիդ որ յետոյ ծիծ տաս չի լինիլ. կէսը կը գնայ, թէ կը մեռնի: Զի մեռնիլ, մի՛ վախենայ. աղջիկ է, երեսը պինդ կը լինի:

— Տէր Ասուած, գոչեց Սաթենիկը համբերութիւնը հալած. ցաւ է էլի, ցաւ:

— Ըհ՛ը, էդ էլ իմ պատիւն է հման. ծաղկես, ծաղկես... Վեր ընկնի քո հօր րունը, որ քեզ նմանին չբերէր իմ ջանովը գցէր:

Սաթենիկը պահ մի լուռ սկեսրի երեսին նայեց և ապա ասաց.

— Որ բերածս տղայ լինէր, խօմ էզպէս չէիր խօսալ հետս:

— Հնչ, պա չգիտեմ:

— Լաւ, ես ի՞նչ մեղաւոր եմ, որ աղջիկ է ծնւել, արտասանեց հարսը աղեկաբար ձայնով: Նա արտասանեց և քիչ յետոյ լի արեւութեամբ շարունակեց.

— Սուր ես խօսում. եթէ տղայ էլ լինէր, դու էլի էսպէս էիր վարւելու հետս, որովհետեւ դու ուղում ես, որ ամեն ինչ քո կամքով, քո քէֆով և ասածով լինի. խռովարար կնիկ ես. քեզ հետ ո՞վ կարող է կառավարել: Ես եմ, որ քարշ եմ տալիս էս կեանքը:

Ասաց, ծածկեց օրօրոցի վարագոյրը և գնաց օջախը վառելու: Երեսան արդէն քնած էր: Թամամը ունքերը կիտած՝ շարունակում էր իր խրատները, գանգաւորները և անէծքը:

— Իհարկէ, դու չես մեղաւոր, ասում էր նա ինքն իրան, — մեղաւորը ես եմ, որ թողի քեզ նման ցաւ ու ցեցը բերեն իմ ջանը գցեն...

VIII

Աշնան սկզբներին օտարութիւնից վերադարձաւ Գէորգը: Նա խանութից իր բաժին ապրանքը բերեց: Մայրն ու բարեկամները շատ ուրախացան

նրա այդպիսի վերադարձի համար: Սաթենիկի ուրախութիւնը կրկնապատիկ էր. նա այլ ևս մենակ չէր իրասածի և կամակոր սկեսուրին դիմադրելու համար:

Ամուսնուն զւարճացնելու նպատակով Սաթենիկը կամեցաւ իր հարեանուհու երեխային գիրկն առնել՝ մարդուն դիմաւորելուց նրան ցոյց տալու թէ սա է քո զաւակը, իսկ յետոյ մի կուշտ ծիծաղել, բայց խտրասիրտ սկեսուրը արգելք եղաւ դրան, ասելով.

— Էդ էր պակաս. շատ մի երեսդ պարզ է մարդու առաջ...

Ասէք մի կուժ սառը ջուր ածեցին խեղճ հարսի գլխին: Նա թոգեց այդ միտքը և իր զգացմունքները զսպած դիմաւորեց ամուսնուն: Թամամը առաջ անցաւ, գրկեց որդուն և երեք անգամ համբուրեց նրա ճակատից: Յետոյ անվտանգ և երկիւղած քայլերով մօտ գնաց Սաթենիկը և բարեկեց ամուսնուն: Գէորգը ամուր սեղմեց նրա ձեռքը, բայց չհամարձակեց մօր մօտ նրան համբուրել:

Քրէհարարները բռնները վեր բերեցին գրաստներից և ջորիները տարան տեղաւորցնելու: Բարեկամների և ազգականների այցելութիւնները վերջացան երկու օրւայ ընթացքում, որից յետոյ Գէորգը իր խանութի գործով կացաւ: Գիւղամիջում մի յարմար տուն կար, վարձեց տարեկան չնչին քրէհով և բերած ապրանքը տեղափոխեց այնտեղ: Խանութի իրեղէնները բազկացած էին գլխաւորապէս

լթեղէնից, ամանեղէններից և այլ մթերքներից։ Ամենքը նախանձուհի էին և ասում։

— Գէորգը էստեղ լաւ աշխատանք է վերցնելու, էս սաղ գիւղերը կը գան նրանից առուտուր կ'անեն։ Առջաղ շարժեց, աֆֆերիմ Գէորգ։

— Գէորգ, պա երբ պիտի խանութդ շնորհաւորենք, ասում էին նրա հասակակից մի քանի երիտասարդներ, — մեզ պիտի հիւրասիրես։

— Աչքիս վրան. երբ որ ուզէք։

Ասելն ու անելը մէկ եղաւ։ Երկու օրից յետոյ կիւրակի էր։ Մի խումբ երիտասարդներ Գէորգի տանը ուրախութիւն էին անում։ Սպասաւորը Սաթենիկն էր, իսկ խոհարարուհին սկեսուրը։ Այսպիսի խնջոյքներում, ուր տանտիրէնը վրայ մեծ պարտականութիւն է ընկնում, սկեսուրը շերեփը իր ձեռքից չի թողնում։ Խոհանոցը նա պիտի կառավարէ։

Տղամարդիկ ուտում էին և կենացներ վայելում։ Սաթենիկը ուրի վրայ սպասաւորում էր նրանց։ Չնայած սկեսրի նկատողութիւններին, նա երբեմն կանգնում էր հիւրերի մօտ և նրանց քէֆին նայում։ Թամամը խիստ միջոցներ չէր կարող առնել զրա դէմ, որովհետեւ հիւրեր կային. տան ներքին կեանքը ուրիշների առաջ պիտի քողարկւած մնար։

Երբ Սաթենիկը վերջին անգամ խորոված բերաւ և շամփուրը ուղղակի թամաղային մատուցեց, վերջինս ուրախութեամբ ընդունեց նրա ձեռքից անուշահոտ և համեղ խորտիկը, տաք-տաք խորո-

վածը վեր շարեց պնակի մէջ, յետոյ իւղոտ մատները լպստելուց յետոյ՝ լիքը բաժակը ձեռքն առաւ և ասաց։

— Կամպանեան, խնդրեմ լսեցէք, էս թաս գինին խմում եմ Սաթենիկ բաջու կենացը։ Սաթենիկ, Աստուած քեզ էլ, որպուդ էլ, մարդուդ էլ պինդ ձեռքով պահի։ Մարդ ու կնիկ միշտ սիրով լինէք և մի բարձի ծերանաք։ Աստուած, ինչ որ սրտեւորումը բարի բան կայ, կատարի։ Տղերք, չխմողը նամարդ է։

Ամենքը մեծաւ հաճութեամբ խմեցին երիտասարդ տանտիրէնոյ կենացը. Անուհետ թամաղան լցրեց նորից բաժակը, մեկնեց Սաթենիկին և խընդրեց, որ սա շնորհակալութիւն յայտնի։ Սաթենիկը ընդունեց բաժակը և մի րոպէ մնաց շշկլած։ Չգիտէր ինչպէս յայտնէ իր շնորհակալութիւնը. երիտասարդների մէջ գտնւում էր Գէորգի քաւորը, որի հետ Սաթենիկը անխօս էր։ Նա մօտեցաւ ամուսնուն, կամենալով սրա միջնորդութեամբ յայտնել իր շնորհակալութիւնը, բայց թամաղան կանգնեցրեց նրան և ասաց։

— Քո լեզուով պիտի ասես, Սաթենիկ, որ ամենքս լսենք։ Եդ ումնից ես անխօս։

— Քաւոր Յովսէփի հետ չի խօսում, պատասխանեց Գէորգը կնոջ փոխարէն։

— Դատարկ բան է, գոչեց թամաղան, որի գլուխը արդէն տաքացել էր գինուց, — ինչքան ան-

խօս է մնացել, հերիք է: Քաւորի հետ անխօս մնալը
նրն է: Դատարկ բան է:

— Քաւոր Յովսէփն է մեղաւոր, որ մինչև հիմայ
չի խօսացրել, ասաց Գէորգը:

— Այլ քաւոր, ես ինչ անեմ, պատասխանեց
Յովսէփը ամաչկոտութեամբ. քանի անգամ եմ ուզել
խօսեցնեմ, չի եղել, մեծ սանամէրը հակառակել է,
չի թողել:

— Դատարկ բան է, կրկնում էր թամազան,
աղջիկ, խօսա:

— Սանամէր, դէ խօսա էլի. տեսնում ես ինձ
խաղաղաւորում եմ:

Ամենքը բարձր ձայնով ծիծաղեցին:

Սաթենիկը մտաւորանքութեան մէջ էր ընկել:
Նա տարանւում էր առանց սկեսուրի հրամանի այդ
քայլն անելու: Բայց պառաւին յայտնելը նշանա-
կում էր մի արգելք ստեղծել: Առանց իրաւունքի
խօսել նշանակում էր առիթ տալ սկեսրին նոր փո-
թորիկ բարձրացնել և սրտնեղութիւնների պատճառ-
դառնալ: Ո՞րը ընտրել: Սաթենիկը մօտեցաւ ամուս-
նուն, կռացաւ նրա ականջին և խորհուրդ հարցրեց.

— Հարկաւոր չէ ազուն ասելը, պատասխանեց
Գէորգը բարձրաձայն, — էդ բանում մեղք չկայ: Քա-
ւորը ասում է, էնքան մարդ էլ խնդրում, էլ ի՞նչ
ես սուս կացել: Եթէ աղին դրա համար խօսելու
լինի, ես նրա պատասխանը կը փամ: Շուտ արա,
մարդիկը սպասում են:

Սաթենիկը ժողովեց իր բոլոր ոյժերը, բաժակը
բարձրացրեց և անհամարձակ ձայնով արտասանեց.

— Շնորհակալ եմ, որ արժան համարեցիք իմ
կենացը խմելու: Սաղ լինէք, ուրախ:

Խմեց գինին և շրտալով գնաց խոհանոց:

— Աղջիկ, ի՞նչ եղար դու, էդքան ուշացար,
դոչեց Թամամը վրդովւած, — Ի՞նչ ես ծնորդ կախ
գցում, էն տղերանց մօտ կանգնում: Դու էլ մի
ամաչես:

— Ես ինչ անեմ. իրանք պահեցին, պատասխա-
նեց Սաթենիկը ժպտալով:

— Ի՞նչու պահեցին, հարցրեց սկեսուրը հետա-
քըրքրութեամբ:

— Կենացս խմեցին, յետոյ թէ պիտի քո բե-
րանով շնորհակալութիւն առնես: Ես էլ դէ քա-
ւորի հետ չեմ խօսում. նա խօսցրեց, ես էլ շնոր-
հակալութիւն չայտնեցի: Ասացի թողէք գնամ
ազուն յայտնեմ, տղադ՝ թէ ես ազուն պատասխանը
կը տամ:

Մինչ Սաթենիկը պարմում էր իր կտարած
քայլի մասին, պառաւը արդէն իր կտարաղութեան
զագագթնակէտին էր հասել: Նրա շրթունքներն ու
ձեռները դողում էին: Ուզում էր խոհանոցի փայտե-
րից մէկը վերցնել և հարսի գլխին խփել, բայց իրան
զսպեց: Արամների արանքով, ձայնը խեղդած և լի
կրքով նա գոչեց.

— Կետինը մտնես դու, որ մեզ խաղաղաւորում

ես. էդ ի՞նչ ես արել քո գլխի... Աղջի, էլ օջին էր մնացել... Խաչատուակես դու, որ մեզ խաչատուակում ես... Քեզ մեծացնողի աչքերը քօռանան, հը՛ր՛:

— Ոչինչ խաչատուակութիւն չկայ, պարասխանեց հարսը յուզւած, — ի՞նչ ես էլի անէ՞ծքներդ սկսում: Էնքան մարդ որ քիթ կալելս աւելորդ էր համարում, էլ դու ինչու ես խօսում:

— Լեզուդ օձ կծի, հը՛ր՛, արրասանեց Քամամը լի կրքով և բարկութեամբ:

Լռեց, այլ ես ոչինչ չխօսաց: Զսպեց իրան, որովհետեւ ընդհարումը կարող էր հիւրերի ականջին հասնել:

— Քեզ հետ յետոյ կը խօսամ, աւելացրեց նա:

Խնջոցքը վերջացաւ, հիւրերը վերկացան գնացին, իսկ Քամամը դեռ քանդում էր հարսի միսը: Տղան մէջ մտաւ, բարկացաւ մօր վրայ և ասաց.

— Դէ հերիք է էլի, ի՞նչ ես գլուխներս փռում: Ամեն մի բանի համար, որ քո քէֆին, քո կամքին հակառակ է, պիտի սրբանեղութիւն դցես էս փունը: Ի՞նչ մեղք ունի հարսը, որ նրան էդպէս լաց ես դցել: Որ ճարումդ ճար լինի, հաւատա էս խեղճին կենդանի կը խեղդես... Ի՞նչ է եկել քեզ... Մենք խնդրեցինք, քաւորը ուզեց, հարսն էլ խօսեց: Կամաց-կամաց պիտի վերանայ էդ չիմար սովորութիւնը, խօս էսպէս չի մնալու: Ուզում ես որ միշտ ամեն ինչ հին կարգով գնայ... Զի կարելի... Անհաշիւ կնիկ ես: Պա չես խղճում սրան:

Նա ցոյց տւեց Սաթենիկի վրայ, որը պարուհանում նստած՝ թաշկինակը աչքերին էր տարել և լացում էր:

— Ապրես, ապրես, պարասխանեց մայրը դառնութեամբ և վիրաւորանքով. էդ էր մնացել, որ մօրդ ասես... Էնքան գինի ես խմել, որ խելքդ կորցրել ես. պա էդպէս չես խօսիլ, պա թաթերդ կնկանդ վրան չես քաշիլ: Քեզ համար ոչինչ, որ կնիկդ էնքան մարդու մօր քաւորի հետ իր գլխի խօսում է և ինձ խաչատուակում: Ապրես, ապրես. կնիկդ որ մեր փան նամուսը կորցնում է՝ քեզ համար ոչինչ. հլա մօրդ էլ յանդիմանում ես. ամօթ քեզ համար:

Եւ արրասեց:

IX

Սաթենիկը միշտ տխուր էր, տխուր՝ ինչպէս իր ազատութիւնը նոր կորցրած թռչնակ: Նա շատ էր մտածում իր անմխիթար վիճակի մասին և հոգեկան փանջանքները հալ ու մաշ էին անում նրան: Նա շարունակ գունաւոր էր և օրըսօրէ նիհարում էր: Ամուսինը անհանգստանում էր կնոջ այդ փոփոխութեամբ, իսկ սկեսուրը նկատում էր:

— Մի փոր երեսաց ես բերել, որ էդ օրն ես ընկել, պա յետոյ քո հալը ինչ կը լինի:

Վերջին ընդհարումից յետոյ Սաթենիկը յաճախ դանդաղում էր Գէորգին, որ սա սաստիկ մօրը իր հետ կարգին վարւելու:

Գէորգը այդ մասին նորից խօսակցութիւն ունեցաւ մօր հետ և խնդրեց նրան, որ հարսի գործերի մէջ շատ չխառնուի: Բացաւորեց թէ հարսը երեխայ չէ, իր պարտականութիւնները հասկանում է, ընդունակ է դոցա կատարելու և ուրեմն սկստի պահանջը, թէ հարսը ամեն ինչ նշա քէֆով պիտի անի, անկարելի է և նոյն իսկ փնասակար: Շեշտել էր այն կէտի վրայ, թէ նոր ժամանակները կեանքի վերաբերեալ նոր սովորութիւններ և հայեացքներ են մըրացրել մարդկանց մէջ, որոնց դէմ կուելը անխելքութիւն է: Զպիտի յետ մնալ ժամանակից, այլ պիտի նրա հետ առաջ ընթանալ...

Այդ խօսակցութիւնից յետոյ Թամամը մի առ ժամանակ այլ ևս չէր խօսում: Բայց նա լուր էր ոչ թէ համոզւած լինելով որդու ասածների մէջ, այլ որ նրա խօսքերից նեղացել, խռովել էր: Նա վճռել էր այլ ևս ոչ մի բանի մէջ չխառնուել:

— Թող քանդուի ամեն ինչ, ասում էր նա ինքն իրան, — շատ հարկաւոր է. դէ որ չեն հասկանում, որ պատիւս չեն ճանաչում, թող ամեն ինչ քանդուի:

Որդու և հարսի համար էլ հէնց այդ էր հարկաւոր. բայց ափսոս, որ երկարատեւ չէր սկստի լուրթիւնը. երկու շաբաթից յետոյ նա դարձեալ իր իրաւունքների մէջ մտաւ և նորից ցոյց տուեց իր իշխանութեան զօրութիւնը:

Պարնան գեղեցիկ օրերը հասել էին: Գիւղի այգեպարտները և արսորայքը ծփում էին նորա-

բաց կանաչի և ծաղկած ծառերի բազմերանգ ծաղիկների մէջ: Եղանակը տաք էր, երկինքը պարզ, ջրերը վարարած. թռչունները ծլւլւում: Ամենուրեք կենդանութիւն էր շնչում: Գիւղացիք օրւայ պարապ ժամերը անց էին կացնում այգիներում, վայելելով բնութեան գեղեցկութեան պարճառած բաւականութիւնները: Կիւրակի օրերը երիտասարդ կանայք և տղամարդիկ այգի էին գնում թէյ խմելու զալար կանաչութների վրայ և ծաղկած ծառերից բուրոյն անուշահոտութեան մէջ:

Այդպէս մի խումբ հարսներ իւրաքանչիւր կիրակի այգի էին գնում: Բացի թէյուխումից նոքա ունէին մի այլ զբաղմունք ևս: Մէլիք Մելքումենց Աւագի հարսը, որ այդ խմբի մէջն էր, բոլորովին այլ բնաւորութիւն էր քան թէյուխումին: Տիկին Նւարդը, ինչպէս կոչում էին նրան գիւղում, մօտիկ գտնուող Շ. գիւղաքաղաքիցն էր: Աւագը իր որդուն Շ-ի դպրոցումն էր ուսում տուել և այդ իսկ պատճառով գիւղաքաղաքից հարս բերել որդու համար: Իր գիւղից նա լայեղ չէր արել աղջիկ ուզելու: Տիկին Նւարդը աւարտել էր իր հայրենի քաղաքի օրիորդաց երկդասեան դպրոցը, մի քանի տարուց յետոյ մարդու էր գնացել և այժմ անային աշխատանքներից զատ պարապում էր ինքնակրթութեամբ: Իր մտաւոր զարգացման աստիճանը բարձրացնելու նրա ամուսինը, որ գիւղի յայտնի արհեստաւորն էր, նոյնպէս հետաքրքրւում էր գրականութեամբ,

Թէ՛կ նրա մտաւոր կերակուրը գլխաւորապէս յրա-
գիրն էր: Ամեն ինչ նա լրագրի մէջն էր գտնում և
լրագրով էր սնւում: Կնոջ համար նա անդամ էր
գրել չարափառական ընկերութեանը: Այդպիսով
Նւարդը միջոց ունէր յագեցնելու իր ընթերցանու-
թեան ծառաւը: Բայց նա միայն իր համար չէր
հոգում. նա մտածում էր և իւր ընկերուհի հարս-
ների մասին, որոնք գրել կարգաւ չգիտէին: Նւարդը
այդպիսիներին ժողովում էր իր շուրջը, այգի էր
փանում, կարգում էր նրանց համար գրքեր և կար-
գացածից խրատներ դուրս բերում: Ամենքը գոհ
էին նրանից, ամենքը պիտում էին Նւարդին:

Սաթենիկը իմացաւ այդ ժողովների մասին և
մի անգամ ցանկութիւն յայտնեց մասնակցելու
դրանց: Նւարդը պատասխանեց թէ ուրախութեամբ
ընդունում է նրա խնդիրը և աւելացրեց թէ որ-
քան շատ լինի մասնակցողների թիւը՝ այնքան լաւ:

Մի կիւրակի, երբ հարսները որոշեալ ժամին
պիտի գնացին այգի, Սաթենիկը մօտեցաւ սկեսու-
րին և յայտնեց իր ցանկութիւնը:

Թամամը նրան կոպիտ ու կտրակի պատասխանեց.

— Ես էդպիսի ծռափ-պռափ բաներ չեմ սի-
րում: Կինը ինչ, գիրք կարգաւ ինչ: Հարկաւոր չի.
մարդ դրանով չի խելօքանալ: Մեծիդ հնազանդ կաց
— դա ամենից լաւ կը լինի: Քիչ ես համարձակ, որ
հլա գնաս Նւարդի հետ էլ նստես վեր կենաս, վերջն
էլ ելնես զլուխս: Նա ինչ հարսն է, որ իր պատ-

րոնի հետ պսակից փուն գալուն պէս խօսացել է:
Չահիլ փղերանց հետ փողոցում պատահելուց կանգ-
նում զրուցում է: Մի ղոնաղ ¹⁾ գալ փունները,
տեսար իսկոյն գլուխը-բաց մէջ եկաւ, բարե ասեց և
ղոնաղի կողքին նստեց: Ինքն էլ ոչինչ չի անում.
միայն կոկւում է և գէս ու դէն գնում: Նրանից ինչ
պիտի սովորես:

Պառաւի վերջին խօսքերը Սաթենիկը զրպար-
պութիւններ անւանեց, բերելով ապացոյցներ: Սոքա
ցոյց էին փալիս Նւարդի՝ որպէս փնտրող հու ջա-
նասիրութիւնը: Միայն այդ փնտրութիւնը հակա-
ռակ էր պառաւ Թամամի հասկացողութիւններին և
պահանջներին:

Այսպէս թէ այնպէս, բայց սկեսուրը հակա-
ռակում էր և չնայած հարսի կրկնակի խնդրանքին,
նա Սաթենիկին թոյլ չտւեց ժողովի գնալու: Սա-
թենիկը այդ դէպքի մասին երեկոցեան յայտնեց
ամուսնուն:

— Քանի-քանի հարսներ գնում են այգի, ասաց
նա, — Նւարդը նրանց համար գիրք է կարդում, լսում
են, նոր-նոր բաներ են սովորում, իսկ ես փանը մե-
նակ նստած պիտի ամեն բանից զուրկ մնամ: Ու-
րիշները կարգաւ գրելը չգիտեն, գնում են. իսկ ես
գիտեմ. ամենից առաջ էդպիսի գործի յետեից ես
պիտի գնամ. սա ամօթ չի փանը նստելը: Չգնացի,

¹⁾ Հիւր:

որ մէրդ սրտնեղութիւն չգցի էս փունը, համ էլ քո խորհուրդն էլ կը հարցնէի:

— Գնա՛, անպարճառ գնա՛, լաւ բան է, պատասխանեց Գէորգը վճռական եղանակով, — միւս անգամ ուշ մի դարձուր մօրս խօսքերին. գիտեմ, որ նա հակառակելու է մինչև վերջը: Դու գնա՛, ես նրա պատասխանը կը տամ:

Հետեւեալ կիրակի հարսները Նւարդենց այգին էին ժողովել: Սաթենիկին էլ իմաց էին արել: Այդ օրը Թամամը ճաշից առաջ մի տեղ հիւր էր գնացել: Այնտեղից նա երկու հիւանդի պիտի այցելէր, այնպէս որ երեկոյեան դէմ հագիւ կը վերադառնար:

Սկեսուրին առանց նախօրօք յայտնելու, Սաթենիկը երեխային խորիւն առաւ և գնաց Նւարդենց այգին:

Արեւը մայր մտնելու մօտ Թամամը փունը վերադարձաւ և փանը ոչ ոքի չգտաւ: Տղան խանութումը կը լինէր, իսկ հմրսը: Դէս նայեց, դէն նայեց, հարեաններից տեղեկացաւ, բաց ոչ մի կերպ չիմացաւ թէ հարսը ուր է գնացել: Չարութեան որդերը շարժեցին պառաւի ուղեղի մէջ և նա սկսեց իր անէծքները:

Արեւը նոր էր մայր մտել, որ Սաթենիկը եկաւ: Պառաւը նրան տեսնելուն պէս յարձակեց վրան և գողաց:

— Ա՛յ քո տեղը դատարկ մնաց, էս ուր ես կորել. եկել եմ փուն, ոչ ոք չկայ: Քեզ ով է իրա-

ւունք արել ցնից դուրս գալու: Պա չես իմանում, որ փանը էնքան պիտի նստես, որ սկեսուրդ դնո՛ւ: Ո՞ր տեղ էիր գնացել, ասա մի տեսնեմ:

— Նւարդենց այգին, պատասխանեց Սաթենիկը յուզւած, զգալով, որ փոթորիկը անխուսափելի է:

— Այ դու մեծ զալաթ էիր արել քո հօր, քո մօր և մեծ պապիդ հետ, լսեցիր... Անզգամ, ես քեզ էն անգամ ասացի չգնաս էնտեղ. էլի քո ուզածն ես անում, հա՛ն: Իմ խօսքերը բանի տեղ չես դնում...

Կռացաւ, ոտքից քօշը հանեց և խփեց Սաթենիկին: Քօշը դիպաւ հարսի ուսին և սաստիկ ցաւ պարճառեց: Ճչաց խեղճը, լաց եղաւ և մտաւ սենեակ: Երեխան սարսափից սկսեց ձայնակցել մօրը:

— Ա՛յ Սաւառ, մըմնջում էր հարսը, — կամ ինձ պար կամ էս պառաւին, որ միմեանցից ազատենք: Էս օր չի, որ ես եմ քաշում:

Տուն եկաւ Գէորգը և տեսաւ կնոջը սենեակի անկիւնում կծկւած: Դեռ հեկեկում էր: Իմացաւ եղելութիւնը և դարձաւ մօրը լի արելութեամբ.

— Աղի, ամօթ քեզ համար, ամօթ. ա՛յ, դու ինչ սիրտ ունեօ, քո սիրտը ինչպէս է տարել, որ էս անմեղ զառան վրայ ձեռք ես բարձրացրել... Անսիրտ կնիկ ես: Հերիք է, ասի ինձ համբերութիւնից հանում ես... Խաչպառակելու ես մեզ: Մի օր էս փանը ուրախ օր չտեսայ, ամեն օր կուխ, հոխ: Պարճառն էլ ամեն անգամ դու ես: Այգի է

գնացել, շափ լաւ է արել: Ես եմ ասել, որ գնաց: Ե՛ս—իմ կինը, խօսքդ թնչ է: Ձեռ թողնելու էս հարսին մի ազափ շունչ քաշի: Դէ հերիք ես, ա՛ն: Ասուած վկայ, խանութս կը հաւաքեմ, ցուռն ցեղս կը ծախեմ, կնկանս վեր կ'առնեմ կը գնամ էսպեղից եւ քեզանից կ'ազափենք: Հերիք է. ախր ամեն բանի էլ շափ ու սահման կը լինի:

—Ապրես, ապրես որդի, պապասխանեց Քամամը այլալուծ ձայնով,—մօրդ լաւ պապիւ ես գալիս: Հա, մէրն է վաւրը, մէրն է մեղաւորը, իսկ կնիկդ արդար է... Աչքերս քօռանան, որ թողեցի դրան ինձ համար հարս բերեն... Էն ժամանակ պիտի մեռնէի պրծնէի, որ էս ամենը չտեսնէի:

Եւ արտասուալի աչքերով հեռացաւ միւս սենեակը:

Ամենքը ցիտուր էին: Տան վրայ մի սե վարագոյր էր կախած: Մի ինչ որ ծանրութիւն ճնշում էր ամենքի կուրծքը: Առանց ընթերցելու նրանք շափ կանուխ անկողին մտնան եւ քնեցին: Երկար ժամանակ Սաթենիկի աչքերին քուռ չէր գալիս:

X

Առջնան ցրտերը հասել էին: Երկինքը շարունակ ամպամած էր, անձրեւը անպակաս եւ օդը խոնավ: Սարերի կապարներին շարունակ պրոցփներ էր գործում թանձր մառախուղը: Արտերն ու այգիները կորցրել էին իրանց կենդանութիւնն ու շքեղութիւնը:

Գիւղի ցեխօր փողոցներով անցնելը դժւարացել էր: Տարւայ այն ժամանակ գիւղացիներին իւրաքանչիւրը ասես մի-մի ծառ-առափ լինէր. եղանակի հետ միասին նրանք էլ մռայլ էին եւ ցիտուր: Հոգսն ու թախիծը չէին վերանում նոցա դէմքերից: Ամեն ոք ունեւորը կիտած, ձեռները գրպանում, մտամոլոր կանգնած էր լինում գիւղամիջի մի ծայրին եւ լուռ ու մոռնջ մտածում: Ձկամ էին միմեանց հետ խօսում: Ծանր եւ անախորժ ժամանակ էր. շուտով հարկ պիտի ժողովէին, իսկ շապերի գրպանում կոպէկ չկար: Ոչ օտարականներն էին փող ուղարկել եւ ոչ բամբակն էր ծախել:

—Ելի պարպք պիտի արած, ճար չկաց, ասում էր ամեն մէկը ինքն իրան:

Ոսկանենց Գէորգը այդ կողմից հոգս չունէր, նա կարող էր ոչ միայն իւր, այլ եւ մի քանի աղքատների հարկը վճարել: Առձեռն փող կար նրա մօտ: Սակայն նա եւ հոգսից զուրկ չէր: Այդ հոգսը նրա մայր Քամամն էր, որ շարունակում էր անհաշի վարել Սաթենիկի հետ եւ վտրամահ անել խեղճ հարսին: Մարդ ու կնիկ մի ուրախ օր չէին ցուցնում իրասածի եւ անհաշի սկեսրի շնորհիւ:

Եւ այդ կինը հալումաշ եղած կրկին չղի հարախ ականջին ամեն օր կրկնում էր.

—Տես, հրէս ասում եմ. եթէ բերածդ էլի աղջիկ լինի, էս ցանը չմտաս, էլ իմ երեսը դուրս

չգաս: Ելի մեր սիրտը պիտի սեւացնես: Պա փղաս խեղճ չի: Առաջ փղայ ժառանգը պիտի ծնուի:

—Մարդս քեզ նման չի, որ փխրի, պատասխանեց Սաթենիկը,—փղայ լինի, չլինի—էլի դու մեր սիրտը սեւ ես պահելու. քո բնաւորութիւնը լաւ եմ ճանաչում:

—Օհօհօհօ, էլի լեզուն բլբլացրեց. որ իմ խօսքիս խօսք չասես, որ ինձ պատասխան չտաս, չի կարելի... Ինչպէս կարելի է, խանի աղջիկ ես ասի...

Լուում էր Սաթենիկը, չկամենալով ընդհանրական անախորժ փոթորկի առիթ տալ: Նա զգուշ էր դրանից և խղճում էր ամուսնուն:

—Ախ, Ասուած, ինչ կը լինէր, որ էս անգամ փղայ լինի, մտածում էր Սաթենիկը,—տեսնես երա՞ք սէր ու խաղաղութիւն կընկնի էս տունը:

Ահա նորից Սաթենիկի ցաւը բռնել է և երիտասարդ կինը իր բոլոր ոյժերը լարած՝ ջանք է անում դիմանալ երկունքի ահեղ ցաւերին: Դարձեալ սկեսուրն էր փառքը, որը աչքերը հարսի երեսին յառած, կարծես շարունակ մտքում կրկնում լինէր. «հը՛, որ աղջիկ բերես, կը թակեմ, ամից դուրս կ'անեմ քեզ»: Ներկայ էր և հարսի մայրը:

Գէորգը առանձնացել էր և անկողին մտել: Երկուստարդի քունը չէր գալիս, կնոջ վրանգաւոր դրութիւնը շարունակ անհանգստացնում էր նրան և նա անհամբերութեամբ սպասում էր մի ուրախ տուրի:

Սաթենիկը ձեռները ծալած անց ու դարձ էր անում իր համար պարտաստած սենեակում: Դեռ ցաւը այնքան սաստիկ չէր և խեղճ կինը, իրան մոռացած, ուրիշների մասին էր հոգում:

—Ախ, Ասուած, ծնունդս թող փղա լինի. ծնողներս խեղճ են, սկեսուրիս երեսին չեն կարողանում նայեն... Թող փղա լինի, որ էս աներես պառաւը մի քիչ ուրախաւաց, երեսիս ծիծաղելով խօսայ, իմ սիրտը բացւի և մեր տան խռովութիւնները վերանան: Խեղճ մարդուս ունքերը իսկի չի բարձրանում, ինչ ասեմ էսպէս պառաւի...

Նա մտածում էր ծնողաց պատւի և ընդանիքի բախտաւորութեան մասին, մի բախտաւորութիւն, որը հիմնւած էր աշխարհ եկող զաւակի աղջիկ կամ փղա լինելու վրայ:

Վերջապէս Սաթենիկը ազատեց, բաց, հիշատակութիւն, այս անգամ ևս ծնունդը աղջիկ էր:

—Վո՛ւյ, գոչեց Թամամը, երկու ձեռքով զրող անելով ծննդկանի գլխին,—ինչ կը լինէր, որ քո մէրը լոյս աշխարհ չգցէր քեզ: Այ՛ քեզ շուրբան, Ասուած, ասի իմ մեղքը ձրն է, որ ինձ էսպէս պատիժ ես տալիս:

Սկեսուրի խօսքերը Սաթենիկի ականջին հասան և հիւանդի ցաւը կրկնապատկեց: Բոլորովին ուժասպառ և շնչասպառ՝ նա փռւեց իր պեղում: Աղջկայ մայրը այս անգամ ոչինչ չպատասխանեց

անխղճմտանք սկեսրին: Նա մօտեցաւ աղջկանը և նստեց նրա անկողնի մօտ:

Քամամը քիչ յետոյ գնաց որդուն աւելելու:

— Հը՛, աղի, ինչպէս վերջացաւ, առանց փորձանքի ազատեց, հարցրեց Գէորգը սրտատրոփ անհամբերութեամբ:

— Հնա՛, բախտաւոր, ազատեց. աղջիկ է բերել, հիմիկանից բաժինք հազրի: Խանութիւն էլ ծախես, չես կարողանալու աղջկերանցդ մարդու տալու ծախքը հանես:

— Այ՛ մէր, հերիք ես, ասաց Գէորգը բարկացած և աղելութեամբ, — քիչ կռուց էդ հարսի գըլխին: Էդ իմ դարդն է, թէ ինչպէս եմ իմ աղջկերանց մարդու տալու: Ախր քեզ ով է հարցնում, թէ կնիկս որպէս է բերել կամ աղջիկ... Էսպէս էլ բնաւորութիւն կը լինի... Թու...

Եւ վերմակը ուսերին քաշելով, երեսը շրջեց մօրից:

— Որդի, ինչու ես նեղանում, ախր ես քեզ ծիծ եմ տւել մեծացրել. ինչի ես թքում վրաս: Սրտիդ դիպչում է, որ ես էսպէս եմ խօսում... Անխելքը ես եմ, որ քեզ համար մրաճում եմ, քո հոգսն եմ քաշում: Հողը իմ գլխին էլ, իմ բախտի գլխին էլ...

Եւ թաշկինակը արդասւալի աչքերին փանելով, հեռացաւ որդուց:

Հետեւալ առաւօտեան մանկանը լողացնելուց

Քամամը հանաքով քողարկած անէծքներ թափեց նորածնի գլխին. և երբ Սաթենիկի անդրանիկ աղջիկը՝ տարի և կիսական Եղիսաբէթը՝ մօտեցել էր տարին ու զարմանքով մտքը դէպի նորեկ քրոջն էր անում, պառաւը ծիծաղելով պատասխանեց.

— Հնա՛, էս է. սա էլ քո կտորն է. քեզ էլ, սրան էլ մի պատանի մէջ դնեմ տամ տէրտէրին փանի թաղի, հնձ...

— Այո, պատասխանեց երեսան միամտաբար:

Մի քանի օր դրանից անցած, առաւօտեան Քամամը կրկին լողացնում էր մանկանը, որը այդ օրը անընդհատ լաց էր լինում: Ոչ մօր ծիծր, ոչ լողացնելը, ոչ օրօրելը — ոչինչ չէր օգնում: Երեւի ցաւող արեղ ունէր:

— Ի՞նչ անեմ ես, զանգարու՞մ էր սկեսուրը համբերութիւնը հալած, — գլխիս եմ դնելու պահեմ... Շատ մի աչքիս լոյսն ես... Սոս, սոս...

Յետոյ դստնալով հարսին՝ զայրոյթով ասաց.

— Աղջի, վերցուր ծիծ փուր նորից, որ ձայնը կտրի:

— Դէ հիմիկս փւեցի էլի, պատասխանեց հալած տրնքայնքալի ձայնով, — սուս չի կենում:

— Էն ցեղից է, որ սուս անի, ընկել է մօրը էլի. ասում եմ վերցուր ծիծ փուր, իսկի ինձ լսում է:

— Դէ հը՛, էս էլ ծիծը, ասաց Սաթենիկը բարկացած և երեսացին արագութեամբ գիրկն առ-

ներով, — ախր իսկի կաթն էլ չի ուտում: զօռով կարող եմ ծիծ փակել:

— Աղջի, էդ հում վրայ ես փոշիդ թափ պալիս, գոչեց սկեսուրը, — ես ինչ մեղաւոր եմ. ծնողը դու, երեխան քոնը. հիմ է մեղաւոր, որ էդպէս մի պատիժ է ծնելի: Հարս բերի, որ թոռներ տեսնեմ, սիրտս բացւի, հանգիստ ապրեմ էս փանը, չեղաւ: Զհաննամը, ծնունդը փողայ լինէր, էլի ոչինչ...

Եւ լռեց, սպասելով պատասխանի: Սաթենիկը, որ այդ օրը երեխայի լացի և իր ցաւերի պատճառով մեղամարտի և դիւրագործութեան էր դարձել, ներքուստ սաստիկ յուզւած էր պառաւի խօսքերից:

— Հը՛, ինչի սուս կացար, ասաց նա արհամարանքով և արեւութեամբ, — մին էլ ասա, որ կշտանաս:

— Պա ինչի չեմ ասիլ, գոչեց սկեսուրը, — փիս հարսի աչքն էլ կը հանեմ... Կարծում ես թէ սուս եմ մնալիս: Դու ինձ ու էս փան համար ցաւ ու կրակ դարձար: Ասուած ինձ իմ ուզած հարսը չհասցրեց: Քեզ նման հարսին փանը պահելու չի, փանը: Երկու աղկանդ էլ ձեռք փակու է և հօդ փունը կը ուղարկելու:

Այդ խօսքերը, որոնք չափ ու սահմանից անց էին, խոր խոցեցին Սաթենիկի քնքոյշ սիրտը: Նրա սրտն ու ձեռքը զոյգ էր ընկել, զոյնը բոլորովին թռել էր և զէմքի վրայ երեւան էին գալիս մէկ մէկ ցընցումներ ու կրկին չքանում: Հարւածը սաստիկ էր և

խեղճը չկարողացաւ դիմանալ դրան: Կամեցաւ խօսել, բայց ձայնը խեղդեց կոկորդում և նրա աղեկփուր լացի միջից լսեց հեղեղալը:

— Սպանիր, սպանիր, մեռնեմ քո ձեռքից պըրծնեմ էլի... Կը գնամ, կը կորչեմ էս փնից, միայն թէ դու ուրախ լինես, միայն թէ քո երեսը չտեսնեմ: Անտէր չեմ, որ միշտ գերի մնամ քո ձեռքին:

Նա վեր թռաւ փողից, թեթեւ շալը ուտերին ձգեց և շտապով դուրս ելաւ փնից:

— Աղջի, հը՛ր ես գնում, գոչում էր նրա յեղեղից սկեսուրը, — աղջի, երկու օրուայ ծննդկանը պա դուրս կը գնայ: Աղջի, կաց, մեզ մի խաչպառակիր:

Բայց Սաթենիկը չէր լսում: Նա արդէն փողոցում էր և շտապով գնում էր հէրանց: Փառքիկ Եղիսաբէթը լաց էր լինում մօր յեղեղից, իսկ նորածինը շարունակում էր իր մղկտոցը:

Քամամը խղճաց երեխաներին: Նա մօտեցաւ, գիրկն առաւ Եղիսաբէթին, համբուրեց նրան և ասաց.

— Լաց մի լինիլ, նանան քեզ զուրբան, մայրիկը հրէս կը դայ... Վատ մայրիկ... Լաց մի լինիլ. գնանք քեզ չամիչ փամ:

Դրան այդպէս լռեցրեց, իսկ նորածնի խանձարուրը գիրկն առնելով սկսեց անց ու դարձ անել սենեակում և զրկումը օրօրել նրան: Քիչ յետոյ նորածինն էլ իր ձայնը կտրեց, կարծես նա մի փոթորկի էր սպասում:

— Էսպէս էլ խաղաղապահութիւն կը լինի, կըրկնու՞մ էր յաճախ թաւամբ, ձեռքը դլխին խփելով:

Տուն եկաւ Գէորգը:

— Ո՛ւր է Սաթենիկը, հարցրեց նա:

Մայրը պարմեց եղբւրթիւնը: Երիտասարդը ձեռքը ճակատին զարկեց և շանթահար դուրս թռաւ փնից: Աներոջ փունը մփնելով՝ փեսաւ, որ կինը պառկած է: Զոքանչը երկու վերմակով ամուր ծածկել էր նրան, իսկ ինքը կողքին նստել: Աչքերի արտասուքը դեռ չէր չորացել:

— Ել օյին էր մնացել, որ մէրդ աղջկանս գլուխը չբերի՞, ասաց զոքանչը: — պա ծննդկանի հետ էդ պէս կը վարւէն: Եկաւ էստեղ. երեսի դոյնը էդ պարի դոյնն էր դառել: Սաղ ջանով դողում էր: Ծածկել եմ, նոր է սխեղ պաքանալ: Հրէս Սոնային ուղարկում եմ, որ գնաց երեխաներին բերի. փոքրիկին ծիծ պալ է հարկաւոր էս գիշեր:

— Ի՞նչ անեմ ես, գոչեց Գէորգը յուզւած և լացակումած: — ջոկեցիւ եմ, կնկանս հետ առանձին ապրեմ: Ինչ որ մէրս ուզի կը փամ, միայն թէ կընկանս ազատ թողնի: Գիւղացիք ինչ ուզում են՝ թող խօսեն. իմ կնոջ կեանքը ամեն բանից թանկ է ինձ համար. էլ չեմ կարող համբերել ու փանել...

— Ինչ ուզում ես արա, միմիջում էր Սաթենիկը փնքալի ձայնով: — միայն ինձ ազատիր էդ ցաւ ու կրակից:

Նրա ձայնը ասէք յատուկի փակից գալիս լինէր:

Սաթենիկը այդ գիշեր սաստիկ փենդ ունեցաւ: Այնուհետ օր օրի վրայ նրա մարմնի փաքութիւնը բարձրանում էր: Հարսը սարսափելի վրանգի էր մարնւած: Նրա ծնողները և ամուսինը յուսահատութեան մէջ էին և չգիտէին ինչ անեն: Խեղճ մայրը ծածուկ լաց էր լինում: Նախազգալով աղջկաց դրութեան անյուսալի վախճանը, Սաթենիկը ծննդին ջաջորդող փենդ էր սփացել: Հայրական փունն եկած օրւանից երեք օր անցած նա՝ զուրկ բժշկական օգնութիւնից՝ ծանր փանջանքների մէջ աւանդեց իր հոգին, խոր սգի մէջ թողնելով թէ ամուսնուն և թէ ծնողացը:

— Կշտացար, արտասուքի միջից գոռում էր Գէորգը, դառնալով մօրը: — Կշտացար, դէ գինջացիր: Թաւամբ, որ խնամուց փուն էր եկել հարսի մահւան պարճառով, ծեծում էր իր գլուխը ու ողբում:

— Ասուած, ի՞նչու ինձ չտարար հարսիս փեղ. պա խեղճ չէր փղաս, պա խեղճ չի էս ծծկեր երեխան...

Գէորգը լաց լինելուց դադար չէր առնում:

— Վայ իմ անբախտ Սաթենիկ ջան, գոչում էր նա անդադար:

Երբ աչքերը ընկնում էին երկու փոքրիկների վրայ, Գէորգը մազերն էր սկսում փեպել և անէծք ու նախադինք ուղղում իր մօրը: Իսկ մայրը ալլ ևս լուռ էր կացել և միայն առատ արտասուք էր թափում: Նա մնացել էր քարացած անսպասելի աղէտի առաջ և չէր կարողանում ոչ ղքի երեսին նայել:

Գլուխը քարշ՝ Թաշկինակը շարունակ աչքերին էր
տանում: Լուռ էր: Զգում էր նա արդեօք իր յան-
ցանքի ամբողջ ծանրութիւնը, թէ ներքուստ չա-
րանում էր անհնազանդ հարսի վրայ:

Վաղաթառամ էակի մարմինը հողին յանձնե-
ցին: Համարեա բոլոր գիւղացիք ներկայ էին յու-
ղարկաւորութեանը: Ամենքը ծանր փպաւորութեան
փակ վերադարձան գերեզմանային, ծանօթ լի-
նելով Սաթենիկի ցաւաւանջ կեանքին:

Կարճ միջոցից յետոյ մօր Թարմ գերեզմանի կող-
քին տեղ գտաւ նորածինը, որ կարծես կապարւած
աղէտի ծանրութիւնից և Թամամ տառի ապագայ
կռռոցից ազաւրելու համար՝ գնաց մօր ետեւից...



5196

2013

ԳԻՆՆ Ի 20 ԿՈՊԵԿ

Վաճառում է Մուրճ ամսագրի խմբագրա-
րանը:

Գ/մել՝ Тифлисъ. Редакція „Муртъ“, արդատականից՝
Tiflis Russie Rédaction de la revue Mourtch

